

2761

525

π - 89

2010

2072

Հրատար. Օդէսսայի Համալսարանի Հայ ուսանողների.

525 այ  
Ե-39

# ԵՐԿՐԻ ԵՒ ԵՐԿՆՔԻ ՄԱՍԻՆ

## ԶՐՈՅՑՑՆԵՐ

(ՌՈՒՍԵՐԵՆԻՑ)



ՄՈՍԿՈՒԱ.  
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.  
1892

22813

Документы из архива Государственного Исторического музея

Документы из архива Государственного Исторического музея

Документы из архива Государственного Исторического музея

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 16 Марта 1892 года.



2432-55

Тип. М. Бархударянъ, Москва, Мясницкая, д. настѣл. Ананова.

## ԵՐԿԻՐԸ ՃԱՅՔ ՈՒՆԻ՞, ԹԵ ՈՉ.



Ղանիմ այն օրերին, երբ ես զիւղում  
ոչխարներ էի արածեցնում: Արեգա-  
կը ծագելիս դուրս էի գալիս տանից  
և մայր մանելիս վերապառնում: Պառ-  
կում էի խոտի վերայ. չորս կողմիս  
ոչխարները տրածում էին. վերեկց  
թռչունները երգում, իսկ երկնքի վե-  
րայ լողում էին ամպերը: Պառկում էի ու անշարժ  
մնում: յանկարծ քունը վրայ էր հասնում և փա-  
կում աչքերս: Երբեմն էլ մատծում էի զանազան  
բաների մասին և չի նկատում, թէ ժամանակը ի՞նչ-  
պէս անցաւ: Ճիշտն տաճ՝ այսպիսի դէպքեր քիչ  
էին որսահում սկզբում, քանի որ կարծում էի,  
թէ մեր գաւառական քաղաքից գէնը ուրիշ աշխարհ  
չ'կայ. բայց երբ լսեցի մի անգամ ծերունիներից, թէ  
մեր գաւառը միակը չէ, այլ նրա նման 15 գաւառ  
կայ մեր նոհանում և այդ նահանգի նման 50 նա-

Հանդ կայ մեր ամբողջ թագաւորութեան մէջ—այն ժամանակ միայն սկսեցի մտածել, թէ որքան մեծ պիտի լինի մեր տէրութիւնը: Քանի՞ օրավար հող կ'ունենայ մեր տէրութիւնը, մտածում էի, եթէ մէկ կալուածատէր միայն երբեմն ունենում է մօտ 20 հազար օրավար: Բայց երբ իմացայ, որ մեր թագաւորութիւնն էլ միակը չէ աշխարհում, այլ թուրքերն էլ ունին տէրութիւն, պարսիկներն էլ անդիւցիք էլ նոյնպէս թագաւորութիւն ունին գերմանացիք, ֆրանսիացիք, շվեյցարիք և չինացիք, որտեղ մեզ համար թէյ են բերում—այն ժամանակ զարմանքից բերանս բաց մնաց:

Ուրեմն որքան տեղ են բռնում այդ բոլոր տէրութիւնները: Բայց դուքս է զալիս, որ դա բոլորը չէ դեռ. բացի հողեց, այսինքն բացի յամաքից կան և ծովեր, ամեն մէկը մի թագաւորութեան չափ, նոյնպէս կայ ովկիանոս ծով, որը մէծ է բոլոր տէրութիւններից, միասին վերցրած: Տէր Աստուած, այդ որքան տեղ կայ երկրիս վերայ. ոչ խօսքով կարելի է ասել, ոչ զրչով նկարագրել: Ո՞րտեղ է վերջանում այդ երկիրը, մտածում էի ես: Ո՞րտեղ է նա միանում երկնքի հետ: Այս միաքը բոլորովին դուքս չէր զալիս զիլիցոս: Հէնց որ սկսում էի զրա մասին մտածել չէի նկատում, թէ ինչպէս օրը թուաւ. Աստուած վկայ, շատ անգամ մոռանում, հաց էլ չէի ուտում և ինչքան—ինչքան ինձ ծեծում էին զրա

Համար... Պատահում էր, որ ուշքի էի գալիս ու տեսնում, որ արեգակը արդին մայր է մտել և գիւղի ձրագները վառել են վաղուց, իսկ իմ ոչխարները ցիր ու ցան են եղել դաշտում: Կէս գիշերին հաղեւ-հազ տուն էինք հասնում: Իսկ այստեղ սկսւում էր տուրուգմբոյցը:

Բայց այդ ինձ վերայ չէր ազդում: Երկրի ծայրը կրկին մոքից չէր հեռանում: Ինքս էլ չ'գիտեմ, ի՞նչ էր պատահէլ ինձ: Ախր ինչո՞ւ այնպիսի մարդ չ'կայ, որ աշխարհիս ծայրը տեսած լինի—ասում էի ես: Մեղանում աշխարհ տեսած մարդիկ կան, բոլոր քաղաքները, բոլոր նահանգները ման են եկել, բայց երկրի ծայրին չեն հասել: Կարելի է մեր կողմերում չէ այդ ծայրը, այլ մի ուրիշ թագաւորութեան մէջ: Ո՞ւ այնտեղ էլ չ'կայ, մեր գիւղում մի հին զինուոր էր ապրում, որ բոլոր աշխարհը ուաքի տակն էր առել. եղել էր Տաճկաստանում, Գերմանիայով անցել էր, Ֆրանսիայում էլ երկար ժամանակ ապրել էր: Ես նրան հարցրի, ասում է. աշխարհիս ծայրը չեմ տեսել:

—Հապա Ֆրանսիայից դէնն ի՞նչ է:

—Այնտեղ ջուր է, ծով է, պատասխանում է նա:

—Իսկ ծովից դէ՞նը:

—Ծովից դէնը կրկին յամաք է:

—Ուրեմն այնպիսի երկիր կամ ծով չ'կայ, որ նրանից դէնը էլ տեղ չ'ինի գնալու:

—Ոչ—ասում է—այդպիսի տեղ չկայ. ևս շատ երկիրներ եմ ման եկել բայց այդպիսի բան ոչ տեսել եմ, ոչ լսել:

Սա ի՞նչ հանելուկ է... վերցնենք թէկուղ դաշտը—նա ծայր ունի: Վերցնենք նահանգը, նա էլ ունի ծայր: Նոյնպէս ամեն մի թագաւորութիւն սահման ունի և ամեն մէկ ծով ունի եզր: Հապա ի՞նչպէս է, որ երկիրը չունի ոչ ծայր, ոչ եզր, ոչ սահման: Եթէ ասենք, թէ նա բոլորովին սահման չունի... բայց չէ, չկ կարելի, որ նա սահման չ'ունենայ. միայն Աստուած է անսահման: Բայց ուր է այդ սահմանը և ի՞նչ կայ այդ սահմանից դէնը: Այսպէս ամբողջ ամառը զլուխս ձաքեցրի: Մտածում էի, մտածում, զլուխս սկսում էր պաշտպան դաշտը և ես թքում ու թողնում էի: Գուցէ այդ զրութեան մէջ յաւիտեան մնայի, եթէ մի դէպք ինձ չօգնէր:

Աշուն էր. ևս արդէն սպասաւոր էի, այլ ևս հովվութիւն չէի անում: Մէկ անգամ խոհանոցում նստած էի մեն-մենակ: Առաջիս, սեղանի վերայ զրած էր մէկ լսու, մեծ ձմերուկ. նրա վերայ ձանձեր էին ման գալիք: Նրանցից մէկը բռնեցի, թե երին մի կտոր թուղթ կպցրի և բաց թողեցի ձմերուկի վերայ. «գէ՛հ, քաշ տուր սայլը»—ասայի: ձանձը սկսեց առաջ վազել. նա կը թռչէր, բայց որտեղ... սայլը խեղճի ուսին էր: Հաղիւ-հաղ ոտները քաշ

աալով նա առաջ ու առաջ էր գնում, կարծես մէկը նրա յետեկցն էր ընկել: ձանձիկս սողալով պտտեց ձմերուկի չորս կողմը և կրկին եկաւ նոյն տեղը, որտեղից նրան բաց էր թողել: Հասաւ ու կրկին ըսկսեց առաջ գնալ միւնոյն ձանապարհով, երևի շըշկըլուկը, էր բոլորովին: Բայց այս անգամ կէս ձանապարհին յոգնեց և ուժասպառ փայր ընկաւ յատակի վերայ: Երևի խեղճի ոյժը չէր պատում սայլը քաշելու: Նորից մտածմունքի մէջ ընկայ: Նայում էի ձմերուկին և այն ձանապարհին, որտեղեց գնում էր ձանձը... յանկարծ զլիսում մի միտք ծաղեց: Ի՞նչպէս է, որ մինչեւ այժմ խելքս չէր կտրում, ինչ յիմարն եմ եղել ես—ասայի ինքս ինձ: Կարելի է երկինքն էլ ձմերուկի նման կլոր է. կարելի է, մենք ևս ձանձի նման մաղցում ենք նրա վերայ: Եթէ այդպէս լինի, այն ժամանակ կտղես հարիւր տարի շարունակ առաջ գնայ, ծայրը չես գտնի: Զի կարելի ասել, թէ ձմերուկը ծայր չ'ունի, միայն չ'գիտենք, սկիզբն ուր է և վերջը ուր, որովհետեւ նա կլոր է: Նատ կարելի է ձանձին նոյնպէս թւում էր, թէ, որտեղ որ է, ծայրը կը գտնի. բայց քանի առաջ էր գնում, այդ սահմանը հեռանում էր նրանից: Այդպատճառով ձմերուկի ծայրը չ'գտաւ և վայր ընկաւ:

Չ'գիտեմ, ինչեր անցան մոքովս այդ միջոցին և որքան ժամանակ նստած մնացի. յիշում եմ միայն, որ տեղիցս վեր թռայ և վազեցի, ուր որ աչքս

կտրում էր: Եկայ, տեսնեմ մեր աղախինը վարունկ է քաղում բանջարանոցում: Նստեցի նրա դիմացը:  
—Ի՞նչ ես բերանդ բաց նստել առ այս տոպրակը  
և տար խոհանոց—ասաց նա:

Տոպրակը տարայ և կրկին յետ գարձայ ու տեղս  
նստեցի: Վերջը չհամբերեցի. «Քոյրի՛կ, ա քոյրի՛կ,»  
կանչեցի:

—Հը, ի՞նչ կայ:

—Գիտե՞ս երկիրը կլոր է:

—Ի՞նչ...

—Երկիրը կլոր է:

—Ի՞նչ երկիր:

—Մեր երկիրը, որի վերայ ամենքս ապրում ենք:  
Նա կլոր է, իսկ և իսկ ձմերուկի նման:

—Չեմ հասկանում, ինչ ես խելքեցդ դուրս  
տալիս: Վեր առ տոպրակը, յետելցս ե՛կ:

Եւ մենք դուրս եկանք բանջարանոցից:

Անցաւ երկու շաբաթ: Սկզբում ուրախանում էի  
իմ գիտի վերայ, իսկ յետոյ կրկին տրտմեցի: Հէնց  
որ սկսում էի ինքս ինձ հարցնել, թէ այս բանը  
կամ այն բանը ի՞նչպէս կը լինի, եթէ երկիրը գրն-  
տաձեւ է, քիչ էր մնում, որ լաց լինէի բարկու-  
թիւնից: Ամենից առաջ ես զարմանում էի, թէ ին-  
չու երկիրը մեղ տափարակ է թւում, քանի նա կը-  
լոր է: Եթէ նա կլոր է—մտածում էի—ուրեմն նրա  
վերայ առաջ պէտք է շարունակ բարձրանալ ինչ-

պէս սարի զլուխը, իսկ յետոյ շարունակ պէտք է  
յած իջնել: Ընդհակառակը՝ այդպէս չէ. մենք շա-  
րունակ տափարակ տեղով ենք գնում: Եթէ երբեմն  
էլ պատահում են սարեր, նրանց վերայից իջնում  
ենք դէպի տափարակը: Բայց դրա հնարը, գոհու-  
թիւն Աստուծոյ, շուտով գտայ: Աստուած բարի  
տայ Ճանձին. այս անգամ նա ևս ինձ օգնեց: Ես  
մտածեցի, երեխ նրան նոյնպէս թւում է, թէ  
ինքը տափարակ տեղով է գնում, որովհետեւ նա  
աւելի քիչ է տեսնում ձմերուկը, քան թէ մենք  
երկիրը: Ամբողջ ձմերուկը նա չէ տեսնում, ինչպէս  
մարդիկ ամբողջ երկիրը չեն տեսնում: Նա տեսնում  
է միայն այն փոքրիկ տեղը, որի վերայ կանգնած է  
և իր շրջապատը մի վերջոկի չափ, ոչ աւել: Իսկ  
այդպիսի փոքրիկ տարածութիւնը ձմերուկի վերայ,  
ի հարկէ, տափակ կ'երեխ. մարդուս աչքին անգամ  
կլոր չի երեխլ: Ուրեմն զարմանալի չէ, որ երկրի  
կլորութիւնը նոյնպէս չի նկատում մարդս, զարմա-  
նալի չէ, որ մեր երկիրը նոյնպէս տափարակ է թր-  
ւում մարդուս: Այդ նրանից է, որ մենք մեր չորս  
կողմում տեսնում ենք երկրի միայն մի փոքրիկ  
մասը՝ մի վերստաչափ և ոչ աւել. իսկ այդպիսի  
փոքրիկ տարածութիւնը աւելի տափարակ է թւում,  
քան թէ կլոր: Եւ եթէ սարեր են պատահում, դա  
նոյնն է, ինչ որ ձմերուկի վերայի բշտիկները: Թէև  
Ճանձի համար բշտիկը կարող է մեծ երեխ, բայց

ամբողջ ձմերուկի համար նա աննկատելի է: Նոյնպէս էլ մեր սարերը երկրիս վերայ. մեր աչքին նոքա շատ մեծ են երեռւմ, իսկ երկրի համար նոքա բշտիկի նման մի բան են: Այսպէս ես վճռեցի, որ երկիրը նոյնպէս գնտաձև է, ինչպէս ձմերուկը, միայն միլիօն-միլիօն անդամ մեծ ձմերուկից: Բայց ես աւելի նեղն ընկայ, երբ սկսեցի մտածել թէ ինչու ջուրը չի թափվում երկրի վերայից, եթէ երկիրը ձմերուկի նման է: Զի՞ որ ձմերուկի վերայ ջուրը չի կանգնի: Դորա համար զիխիս շատ զու տուի, բայց ոչինչ դուրս չեկաւ. չկարողացայ բոլորովին այդ բանը հասկանալ: Այդ միջոցին հակառակի պէս ուրիշ հարցեր էլ առաջ եկան. ինչու այն մարդիկը, որոնք ապրում են ձմերկաձեւ երկրի ներքին մասում, վայր չեն ընկնում, կամ ի՞նչպէս է, որ նրանց արիւնը զլուխներին չի տալիս, չի՞ որ նրանք զիխավայր են ման դալիս: Երկար չարչարուեցի զրո վերայ. անցան շաբաթներ, ամիսներ, բայց ես խելքի մօտիկ մի բան չդառյ: Կարծեցի, թէ այդ բոլորը սուտ է, թէ այդ բոլորը իմ խելքիս ծնունդն է և երկիրը չի կարող կը լիներ. Վճռեցի գնալ տէր-Օհաննէսի մօտ, գուցէ նա բացարէ: Իսկ եթէ չը բացատրէ... մտածեցի ես: Իսկ եթէ բացատրէ և այն չասէ, ինչ որ ուզում եմ... Եթէ ինձ ասէ սխալ ես, ցնդուել ես զու: Էհ, թող ինչ ուզում է, լինի, պիտի գնամ: Ազատ միջոց ձարեցի և գնացի: Տես-

նեմ՝ տէրտէրակինը նախասէնեակում կանգնած է: — Ի՞նչ ես կամենում— հարցրեց նա: — Տէր-հօր մօտ եմ եկել: — Ինչի՞ համար, ասա տեսնեկը: — Ոչինչ, այնպէս պատասխանեցի ես: Բայց ձիշտն ասած՝ սարսափում էի մի տեսակ. ախր ինչպէս ասեմ նրան: Գնայ, տէր հօրը կանչեց: Ինքն էլ այնտեղ կանգնեց: Բայց լեզուս կապ ընկատ: — Հըմ..., ի՞նչ կայ, բարի լինի: Իսկ ես ինքս էլ չգիտեմ, թէ ի՞նչ ասեմ: Վերջապէս սիրտ առայ ու ասայի՝ փ սէր Աստուծոյ, օգնիր տէր հայր»: — Ասա, ի՞նչ ես ռւզում: — Մի խելք սովորեցրու ինձ: — Ի՞նչ ես դուրս տալիս, յիմար: — Ճիշտ որ յիմար եմ և հենց դորա համար էլ եկել եմ: — Ասա վերջապէս, ի՞նչ ես ռւզում: — Խոնդրեմ ասես, ի՞նչ բան է այս հողը, մեր երկիրը: — Ի՞նչ... . . . — Երկիրը, հողը ի՞նչ տեսակ է: Տէր հայրը ուղղակի նայեց երեսիս, իսկ տէրտէրակինը ծիծաղեց. այնպէս ամաչեցի, որ չեմ կարող ասել: — Ի՞նչ հողի մասին ես հարցնում, հողը տե-

սակ-տեսակ է լինում—ասաց տէր հայրը—կաւոտ  
կամ աւազոտ, կամ սև հող:

—Ոչ, ես այդ չեմ հարցնում, այլ մեր երկրի  
մասին. ի՞նչ տեսակ է նա:

—Նա սևագոյն է: Դու ինքոր էլ տեսնում ես:  
—Ախ, ցաւն այն է, որ չեմ կարող հասկացը-  
նել: Ոչ, տէր-հայր, այդ չեմ հարցնում, այլ ու-  
ղում եմ իմանալ թէ մեր ամբողջ աշխարհը ի՞նչ  
ձեւ ունի, ինչի՞ է նման—արկղի, գաթայի թէ ձմե-  
րուկի:

—Հըմ... տես ի՞նչ է ուզում: Այդ որտեղից է  
գլուխդ մտել: Ինչի՞ պէտք դա:

—Լաւ, ասա, մի խորշիր:

—Զմերուկի նման է:

Այս որ ասաց, սիրտս տեղն ընկաւ: Նայում էի  
նրա վերայ ու չէի իմանում, թէ ուրիշ էլ ի՞նչ  
հարցնեմ կամ ինչու համար եմ եկել: Տէրտէրը  
նոյնպէս նայեց վերաս, մի քիչ լռեց և կանչեց սեն-  
եակը: Սենեակում նստացրեց, ընկոյզներ տուեց ինձ  
և սկսեց հարց ու փորձ անել. այնպէս որ բոլորո-  
վին բացուեցայ: Հիմա բոլորը կ'իմանամ—ասացի  
ինքս ինձ:

—Տէր հայր, եթէ երկիրը կըր է, ինչու նրա վե-  
րայի ջուրը չի թափւում և մարդիկ փայր չեն ընկնում:

—Ինչու վայր չե՞ն ընկնում—հարցրեց նա:

—Այո:

Տէր հայրը մասւ միւս սենեակը, մի ինչ որ  
արկղից հանեց քարի նման մի սև բան և բերեց:

—Գիտե՞ս սա ինչ է—ասաց:

—Ոչ չգիտեմ:

—Սրա անունը մագնիս է. սա մի այնպիսի քար  
է, որ երկաթը դէպի իրեն է ձգում: Եւ ծշմարիտ,  
նա վերցրեց բանալին, մօտեցրեց մագնիսին, իսկ բա-  
նալին կպաւ և քարի վերայ ուզիղ կանգնեց, ինչ-  
պէս մարդը գետնի վերաց:

—Դէ՞հ, հիմա պոկիր բանալին—ասաց տէր-  
հայրը:

Ես, ձգեցի, կարծում էի հեշտ կը լինի, բայց  
չէ. հազիւ-հազ կարողացայ նրան բաժանել քարից:

—Հիմա էլ տակից մօտեցրու,—ասաց նա:

Մօտեցրի թէ չէ, բանալին ձեռիցս դուրս պրծաւ  
և կրկին կպաւ մագնիսին ու այնպէս կափուած  
մնաց: Այս ինչ տեսիլք է. նայում եմ—նայում, չը  
լինի թէ մի բան կայ քսած բանալիին կամ քարին,  
ոչ բոլորովին չոր է: Բանալին սրկում եմ, նորից  
մօտեցնում կրկին կպչում է քարին, կարծես՝ խլում  
են ձեռիցս, կարծես բանալին ինքն է ուզում դուրս  
պրծնել ձեռիցս: Մօտեցնում եմ տակից, փերեկից,  
այս կողմից, այն կողմից—բանալին քարի վերայ կանգ-  
նում է և փայր չէ ընկնում, մինչև յետ չեմ քաշում:  
Կատարեալ հրաշք: Այս մագնիսը տեսնելով՝ ես մոռա-  
ցայ երկիրը, բայց տէր-Շաննէսը ինքը յիշեցրեց:

— Այս, տեսնում ես — ասաց նա: Մեր ամբողջ երկրագունալը այս քարի նման մաղնիս է, դեռ սրանից էլ լաւը. սա միայն երկաթն է ձգում դէպի իրեն, այն էլ մէկ փաքրիկ կտոր, իսկ երկիրը դէպի իրեն ձգում է՝ մարդկանց, գաղաններին, աները, ջուրը և տմենը, ինչ որ գանգում է երկրի վերայ: Հետո այդ իսկ պատճառով նրա վերայից ջուրը չէ թափում և մարդը վայր չէ ընկնում: Երկրի տմենաներքին մասում ապրողներն անդամ վայր չեն ընկնիլ ինչպէս այս բանալին, որ կախուած է զիսավայրը: Բայցի դրանից՝ եթէ մարդիկ իրենք կամենան երկրից բաժանուել, օրինակ, թէ ուզենան դէպի վեր ցատկել չեն կարող շատ բարձրանալ որովհետեւ երկիրը դէպի իրեն է քաշում նրանց. այդ պատճառով նրանց ոտները իսկոյն կը զիպչեն գետնին: Առհասարակ մենք ասում ենք այդ նրանից է, որ մարդը ծանր է, որ նրա մէջ շատ ծանրութիւն կայ: Բայց ծանրութիւնը առաջ է գալիս նրանից, որ երկիրը ձգում է դէպի իրեն:

Փառքի շատ, Աստուած. աչքերս բացուեցան և ամեն ինչ ցերեկուայ լցուի նման պարզուեց ինձ համար: Ափաշկարայ տեսայ, որ երկիրը անշուշտ կլոր է. բայց էլի շարունակեցի հարց ու փորձը:

— Հապա ինչո՞ւ նա տափարակ է թւում, ինչո՞ւ միանգամից չէ երկում, որ նա կլոր է:

— Դու ողբան տարածութիւն կարող ես տեսնել չըրս կողմը — հարցրեց տէր հայրը:

— Մի վերստի չափ:

— Տես՝ որ մի վերստաչափն իսկ եթէ տեսնէիր մինչև անգամ տասը վերստի չափ, էլի ամբողջ երկիրը չէիր կարող նկատել որովհետեւ նա ձմերուկ չէ, նա հազար վերստից առել է: Եթէ նրա համար մի գոտի շինէինք, 37 հազար վերստ երկարութիւն կունենար: Մի ամբողջ տարի է հարկաւոր նրա չըրս կողմը ման գալու համար:

Ուրիմն ի՞նչպէս կարող է մարդ ամբողջ երկիրը տեսնել այն էլ նրա վերայ նստած: Ուրիշ բան է, եթէ մարդ թուչէր հեռու, օրինակ, մինչեւ լուսնի մօսը, այն ժամանակ կը տեսնէր, որ երկիրը կլոր է, իսկ նրա վերայ մնալով նա տեսնում է միայն այն, ինչոր իր քթիւակին է մի վերստաչափ հողի կտոր, ոչ ամբողջ երկիրը:

Իսկ այդ չնչին տարածութիւնը իր փոքրութեան պատճառով տափարակ է երկում: Զէ՞ որ ձմերուկի այն մասը, ուր նստած է ծանրը, նոյնպէս տափակ է թւում: թէպէս ձմերուկը կլոր է:

Տես, մատածեցի ինքս ինձ. աէր հայրը նոյնն է ասում, ինչ որ ես կարծում էի:

— Հապա ինչո՞ւ այն մարդոց արիւնը, որոնք երկրագնախ ներքին մասունքն են ապրում զլուխներին չի տալիս — հարցրի ես: Զէ՞ որ նրանք զլիսավայր են ման գալիս:

— Ինչու նրանց արիւնը զլիմների՞ն չէ տալիս —  
հարցրեց նա:

— Այս:

— Աշա ինչու: Արիւնը ձգտում է դէպի երկիրը, ինչպէս և բոլոր առարկաները, որոնք գտնվում են նրա վերայ: Իսկ երկիրը ամեն տեղ մարդու ոտի տակին է, ոչ զլիի վերեք: Ուրեմն արիւնը ամեն տեղ դէպի ոտներն է քաշվում: Աշա ինչու արիւնը մարդու զլիին չէ տալիս: Վերջապէս որն է ձմերուկի վերին մասը և որը ներքին մասը: Եթէ ձմերուկը կոթից վերցնեա, բռնած տեղը կը լինի վերին մասը, իսկ եթէ կոթը ներքե շուռ տաս, այն, որ վերին մասն էր, այժմ ներքին կը դառնայ: Նոյնպէս և երկիրը: Այ, դու կանգնած ես երկրի վերայ, այժմ որն է քեզ համար վերին մասը — ոտիդ տակը թէ զլիիդ վերեք:

— Գլխիս վերեք:

— Իսկ ներքին մասը:

— Ոտիս տակը, որտեղ հողն է:

— Աշա ձիշտ այդպէս է թւում և այն մարդկանց, որոնց մասին հարցնում ես. նրանք նոյնպէս վերին մասն են անուանում այն, ինչ որ իրենց զլիի վերեն է, իսկ ներքին մասը — ինչ որ ոտի տակն է: Ուրեմն նրանց և մեզ համար ներքին մասը կը լինի ամբողջ երկիրը: Նրանք էլ կը կարծեն, թէ ես ու դու զլաւավայր ենք ման զալիս և կարելի է նրանցից մեկը հարցնէ, ինչպէս դու, թէ ինչո՞ւ

ՀՀ  
ՀՀ

մեր արիւնը զլուխներիս չէ տալիս: Իսկապէս ամեն մի կը որ առարկայի, ուրեմն և երկրի, տակը նրա մէջ տեղումն է, ինչպէս զեղնուցը ձռւի մէջ. իսկ արտաքուստ կեղեկի ամեն մի մասը կարելի է անուանել վերին մաս: Այդ պատճառով երկրի վերայ ամեն տեղ հեշտ է ման գալը, ինչպէս այստեղ, որովհետեւ ամենքս էլ սողում ենք այս երկրային կեղեկի վերայ և ամենքիս էլ ձգում է դէպի զեղնուցը, դէպի երկրի սիրար, դէպի նրա կենարօնը:

— Լաւ, տէր-հայր, եթէ մեզանից ներքե ասպրոզ մարդկանց ոտի տակին հող է, ինչպէս և այստեղ, հապա նրանց զլիի վերեք ինչ է, միթէ երկինք է, ինչպէս և մեզ մաս:

— Ի հարկէ, երկինք է:

— Միթէ ամբողջ երկրի շուրջը երկինք է:

— Ի հարկէ:

— Մեր տակին էլ:

— Այս:

— Այդ ինչպէս է: Ուրեմն երկինքը զլսարկի նման չէ, այլ փամփուշտի նման, որ պատում է ամբողջ երկիրը:

— Այս, աւելի փամփուշտի նման է, քան զլիարկի: Դէ՛հ, այսքանը բաւական է քեզ ես պիտի եկեղեցի գնամ, ժամանակ է: Գնա տուն:

— Զէ կարելի տէր-հայր, որ այդ մագնիսից մի կտոր ինձ տաս:



— Ինչի՞դ է հարկաւոր:

— Տանը փորձելու համար:

— Ո՞չ, չէ կարելի: Խոկ եթէ ուզում ես, վեր առ մի կտոր զմուռ, որով կնքում են նամակներ: Դա մագնիսի նման բան է: Մաշուդով յաւ շփիր, իսկոյն նա կը ստանայ մագնիսի զօրութիւն: Երկաթը՝ ոչ, բայց թղթի փոքրիկ կտորներ կը ձգէ:

Եւ տէր-հայրը ֆարաջի փէշով բռնեց մի կտոր զմուռ և մի քանի սննդամ շփից, յետոյ նա կարեց մի փոքրիկ կտոր թուղթ և նրան մօտեցրեց զմուռը: Մէկ էլ տեսնեմ թուղթը թռաւ ու կպաւ զմուռին, Ճիշտ այնպէս, ինչպէս բանալին մագնիսին: Այդ զըմուռն ու թուղթը առայ և վազեցի:

— Փառաւոր մնաս, տէր-հայր: Շնորհակալ եմ: Ճանապարհին չը համբերելով, ցանկապատի մօտ նստեցի և սկսեցի զմուռը չուխիս փէշին քսել, յետոյ մօտեցրի թղթին, նա իսկոյն կպաւ և այնպէս մնայ: Յշտպէս տանում էի տուն, բայց անպիտանը շուտով վայր ընկաւ, երեխ զմուռը կորցրել էր իր զօրութիւնը: Լաւ կը լինի, որ նորից քսեմ—մտածեցի ես: Քսեցի և թուղթը կրկին կպաւ նրան: Այս անդամ տարայ մինչեւ տուն:

Թորանից յետոյ, ինչքան մտածում էի, ինչ հարցեր տալիս էի ինքս ինձ—վերջը զուրս էր գալիս, որ երկիրը կլոր է: Եւ ես այնպէս ուրախ էի, որ ասել չեմ կարող: Մէկ բան միայն վատ էր:

Պատահում էր, երբեմն չէի համբերում և այդ բոլորը պատմում էի մեր ծառաներին: Խոկ նրանք կամ չէին լսում, կամ ծաղըում էին ինձ: «Դու ինքդ ես կլոր», յիմար, ասում էին նրանք: Այդ օրից նոքա սկսեցին ինձ «կլոր» Սաքօ կոչել: Բայց ճշմարիտն ասած՝ յիմարն ու կլորը իրենք էին, ոչ թէ ես:



ոյ բայ և Անողինայ մե անձը ով կարառութ  
քնութ իւշ ուժածուած ով և Անողինայ որո  
տե առջ մէջ Անողին Խոյ Խոյ առջ առջ  
ո բայ անցնութ մէջ Անողին Խոյ Խոյ առջ ո բայ  
ու անցնութ մէջ Անողին Խոյ Խոյ առջ ո բայ  
**ԻՆՉԻ ՎԵՐԱՅ Է ԿԱՆԳՆԱՇ ԵՐԿԻՐԸ**

**Ես** հանդարտուեցի, շատ էլ չէի մտածում, գոր-  
ծերս աւելի ծշտութեամբ էի կատարում և քիչ էի  
ծեծ ուտում: Բայց երկար չ'աւեց այդ: Մէկ երկու  
ամսից յետոյ կրկին կամ ինքնաեռը շատ եփելուց  
թափվում էր, կամ տիրոջս կօշեկը խստակ չէի  
սրբում, կամ քթախոտի տեղ ծխախոտ էի գնում  
տուփի մէջ: Եւ այդ բոլորը այն պատճառով, որ մի  
նոր հարց էր մտել զլուխա: Ես զիտէի, որ երկիրը  
կլոր է, բայց չ'գիտէի, թէ նա ինչի՞ վերայ է կանդ-  
նած, ինչով է նա պահվում: Թէև զրա մասին շատ  
բան էի լսել բայց չէի հաւատում: Լսել էի, թէ  
մէկ ձուկ կայ, որին կէտ են ասում և որը ովկիա-  
նոս ծովումն է ասլում և թէ այդ ձկան վերայ է  
կանդնած երկիրը. կէտ ձուկը, որ շարժուի, երկրաշարժ  
կը լինի, իսկ եթէ իր պոչով ջրին տայ, այն ժա-  
մանակ անձրե կը դայ: Բայց դրան չէր կարելի հա-  
ւատալ որովհետեւ թէ ովկիանոսը և թէ կէտ ձուկը  
իրենք են երկրի վերայ գտնվում, ոչ թէ երկիրը  
նրանց վերայ: Եւ եթէ երկրաշարժի պատճառը կէտ

**ՃՈՒԿԱՐ ԼԻՆԵՐ,** մի ժամանակ պիտի յնցուէր ամբողջ  
երկիրը: Բայց մէկ անգամ մեր զիւզում երկրաշարժ  
եղաւ, իսկ թիվլիսից մեր աղային զրել էին, թէ  
այնտեղ երկրաշարժ չի եղել: Անձրեն էլ, ինչպէս  
երեւում է ամպերից է գալիս, ոչ թէ ովկիանոսից:  
Ծովերի և ովկիանոսների ջուրը աղի է լինում: իսկ  
անձրեն ջուրը աղի չէ: Մէ քանիսներն ասում էին,  
թէ երկիրը փղի վերայ է կանդնած, իսկ փիղը կրի-  
այի վերայ: Բայց այդ ինչ տեսակ փիղ պիտի լինի,  
որ կարողանայ իր վերայ պահնել մեր վիթխարի եր-  
կիրը, որի գօտին ՅՇ հաղար վերստ է: Յյղղիսի  
փղեր չեն լինում և այդպիսի կրիայ չ'կայ, որ կա-  
րողանայ իր վերայ պահնել այդ փղին և մեր ամբողջ  
երկիրը: Բայց զրանից՝ փղերը և կրիաները, ինչպէս  
և կէտ ձուկը իրենք են ասլում երկրի վերայ: ու-  
րեմն մրտեղից կարող է երկիրը նրանց վերայ ընկած  
լինել: Վէրջապէս ասենք, թէ երկիրը կանդնած է  
փղի վերայ և փիղը կրիայի վերայ, հապա կրիան  
ինչի վերայ է կանդնած: Նշանակում է, թէ պէտք  
է նրա տակին մի բան նեցուկ տալ իսկ դրա տա-  
կին մի ուրիշը և պյղպէս նեցուկներին վերջ չի լի-  
նիլ: Յյդ բոլորը վաղուց էի լսել, բայց չէի հաւա-  
տում: Երբեմն ամպերին և թուխպերին նայելիս՝ ինձ  
թւում էր թէ երկիրը ոչինչ նեցուկ չ'ունի, թւում  
էր, թէ երկիրը առանց նեցուկի կանդնած է օդի մէջ,  
ինչպէս ամպը: Բայց ամպը թեթև է, մտածում էի

Ես և զարմանալի չեմ, որ նա կարողանում է օդի մեջ կանգնել, իսկ ի՞նչպէս կարող է նրա մեջ կանգնել մեր վեթխարի երկրագունար:

Այդ ես չեմ հասկանալ և ստիպուած կը լինէի կրկին տէր Օհաննէսի մօտ վազել, եթէ ծննդեան տօները չը հասնէին և մեր աղայի որդին ուսուան տեղից չըդար: Նա սիրում էր ինձ հետ զրոյց անել շատ անդամ ինքն էր սկսում խօսել: Ես նրա փեշեցը բոնեցի, ինչի՞ վերայ է երկիրը կանգնած, ինչով է նա պահվում—հարցնում էի: Նա սկսեց բացատրել բանը նրանումն է, որ, ինչպէս երկիրը մադնիս է մարդի, ջրի և այն բոլորի համար ինչ որ նրա վերայ է գտնվում, նմանապէս արեգակը մադնիս է մեր ամբողջ երկրի համար: Արեգակը նրան ձգում է դէպի իրեն, այդ պատճառով երկիրը կարողանում է առանց նեցուկի մնալ աշխարհի մեջ:

—Հապա ինչու արեգակը բոլորովին մօտ չի քաշում նրան. ինչու երկիրը չի դիպչում արեգակին ինչպէս բանալին մագնիսին:

—Ինչպէս որ թելի ծայրին քար ես կապում ու ձեռիդ շուրջը պատեցնում և այդ քարը ձեռիդ չի դիպչում, նմանապէս երկիրը արեգակի շուրջը պլատելով նրան չի դիպչում: Եթէ երկիրը արեգակի շուրջը պատելիս չ'ինէր, նրան կը դիպչէր, ինչպէս բանալին կապչում է մագնիսին, թուղթը զմուռին,

մարդու ոաները գեանին և շատ կարելի է, որ կըպչելուց բոլորովին այրուէր անգամ:

Այսուեղ միայն մի հանգամանք զարմանալի թւացինձ. ինչպէս կարող է այն փոքրիկ արեգակը դէպի իրեն քաշել այսպէս ահագին երկիրը: Բայց չնորհակալ եմ, կրկին փոքր աղան ինձ օգնեց և այնպէս օգնեց, որ ես ամանեցի, թէ ինչու ինքս չի հասկացել: Դուլս է գալիս, որ արեգակը, թէւ փոքրիկ է երեւում, բայց բոլորովին այդպէս չի իսկապէս: Նա այնպէս փոքր է թւում, որովհետեւ չափազանց հեռու է մեղանից: Ինքս էլ գիտէի և վաղուց գիտէի, որ ամեն ինչ հեռուից փոքրիկ է երեւում: Օրինակ, մեր զանգակատան զիլսի խաչը. ես ինքս տեսել եմ նրան բարձրացնելիս և այն ժամանակ նա բոլոր մարդկանցից մեծ էր, իսկ այժմ, երբ նայում եմ, ինձանից էլ փոքր է երեւում գեռ: Այդ խաչը ընդամենը ութը կամ տասը սամէն է բարձր գետնից և այնպէս փոքր երեւում: Իսկ եթէ մէկ երկու վերստ բարձր լինէր, այն ժամանակի: Ի հարկէ, այն ժամանակ նա բոլորովին աննշմարելի կը լինէր, իսկ արեգակի հեռաւորութիւնը մեր երկրից ոչ թէ մէկ, ոչ թէ հազար վերստ է, այլ մի քանի մլիոն վերստ:

—Այդ բոլորը զրերում զբուած է—ասում էր փոքր աղան. տէր հայրն էլ յետոյ նոյնն էր ասում: Ճիշտն ասած, դրանից յետոյ էլ կասկածում էի, անսր ինչպէս կարելի է չափել այդ տարածութիւնը,

քանի որ արեգակին ոչ կարելի է մօտենալ ոչ էլ թռչելով համել: «Տեսնում ես, մաքով կարելի է թռչել, ասացին նրանք, զիտութիւնով, ուսումով կարող ենք համենել նրան»: Եւ Ճշմարիտ, Երկրաշափը հեռուից չափում է առներ, եկեղեցին, զանգակատունը առանց մօտենալու նրանց: Նա չափում է գետը կամ Ճահիճը ափին կանգնած. Նայում է մի-այն և թղթի վերայ գծում: Խեկ վերջ ի վերջոյ նա ասում է քեզ թէ զանգակատունը որքան սաժեն է, որքան արշին և որքան վերշոկ, այնպէս որ, եթէ բարձրանաս զանգակատան վլուխը, նրանից լաւ չափել չես կարող:

Ինչպէս Երկրաշափները չափում են Երկիրը և բօլորը, ինչ որ գտնվում է նրա վերայ, նոյնպէս էլ աստղագէտները չափում են Երկինքը և ամենը, ինչ որ նրա վերայ է գտնվում: Եւ նրանք չափել են ու գտել որ արեգակը մի քանի միլիօն վերստ հեռու է գտնվում Երկրից: Նրանք գտել են, որ արեգակը ոչ միայն փոքր չէ Երկրից, այլ մեծ է նրանից, գտել են, որ նա Երկրից մեծ է հինգ հարիւր հազար անգամ, այսինքն մեր Երկրի չափ զնտեր կէս միլիօն պիսի մէկու վերայ դարսենք, որ ստանանք մի արեգակ: Ասելը հեշտ է հինգ հարիւր հազար Երկրագունոտ Դա հրաշք է: Այ, հիմա կարելի է հասկանալ ստեղծագործութեան իմաստութիւնը, կարելի է հասկանալ Աստուծոյ կարողութիւնը, որ այսպիսի Երկնա-

յին մարմիններ է ստեղծել: Սրանից յետոյ զարմանալի չէ, որ այն ահաղին արեգակը կարողանում է դէպի իրեն քաշել մեր փոքրիկ Երկիրը: Այո, նա կարող է ձգել և պահել մեր Երկիր նման քսան մարմիններ: Եւ այդտեղ հարկաւոր չեն ոչ սիւներ, ոչ կէտ ձուկ, ոչ փիղ և ոչ էլ կրիայ: Աստուած առանց նրանց կարողացել է իր աներեցիթ զօրութեամբ այդ ամենը իւր տեղը դնել և պահպանել: Փառք քեզ Աստուած, որ ինձ միջոց տուիր Քո դործերն իմանալու:

## ԿԱՊՈՅՑ ԵՐԿՆՔԻ ՄԱՍԻՆ

Կծիկի պոչը գտնելն է դժուար, որ գտար, ինքն իրեն կ'երթայ:

Տեղեկացայ երկրի մասին, ուղեցի իմանալ, ինչ բան է կապոյտ երկնքը: Այժմ տեսնում էի արդէն, որ նա ոչ զիսարկի ձեւ ունի, ոչ խուփի և ոչ գրմբէթի, այլ աւելի նման է փամփուշտի, որի մէջ գտնուում է երկիրը, ինչպէս մէկ սիսեռ կամ թէն նա նման է տոպրակի, որի մէջ տեղում կաղամբի գլխի նման կանգնած է երկիրը և նրան չի քսուում: Ես հասկանում էի ուրեմն, որ երկնքը ոչ մի տեղ չի դիպչում երկրն և եթէ կպչէր, անպատճառ մէկ մարդ կը տեսնէր այդ տեղը, բայց այդ երբէք չէ եղել և չէ լինելու: Եւ եթէ կպած լինէր նա, այն ժամանակ անկարելի կը լինէր երկրի չորս կողմը շարծել: Երկնքը մէկ տեղ ճանապարհը կը կարէր: Իսկ մարդիկ պտառում են երկրի չորս կողմը և զրա համար հարկաւոր է մէկ տարի, բայց ճանապարհին ոչ մէկ տեղ նոքա չեն հանդիպում երկնքին: Ուրեմն, մտածում էի ես, երկնքը շրջապատում է

ամբողջ երկրագունաը և ոչ մի տեղ նրան չի դիպչում և ամեն տեղ նրանից բարձր է ու հեռու: Բայց ահա հարցը ինչումն է, նա ի՞նչ տեսակ է և ինչից է շինած: Եւ ի՞նչպէս են նրա վերայ մնում արեգակը և ուրիշ երկնային լուսատուները: Լսել էի, որ նա ապակուց է, բայց դա անհաւատալի է. նա չէ կարող ապակուց լինել, քանի որ ապակին մարդիկ են շնուռ: Լսել էի նոյնպէս, որ այդ ապակեայ կամարի վերայ երկնքի բոլոր լուսատուները ամրացրած են մեխերով, բայց դրան կարող է հաւատալ միայն նա, որի կարծիքով արեգակը ափսէից փոքր է. իսկ ով որ գաղափար ունի արեգակի մեծութեան մասին, իսկոյն կը հասկանայ, որ նա կարող է կոտրել ամեն տեսակ ապակի: Ամեն մի կամար այդ տեսակ ծանրութեան տակ կը փշուէր: Մի քարիսներն էլ առում են, թէ արեգակը, լուսինը և աստղերը երկնքի լուսամուտներն են: Բայց դա բոլորովին յիմար միտք է: Դրան կարելի էր հաւատալ, եթէ արեգակը, լուսինը և աստղերը գոնէ միշտ մէկ տեղ մնային, բայց բոլորն էլ ման են գալիս երկնքի վերայ: Ուրեմն նրանք երկնքի վերայ շինուած լուսամուտներ չեն, այլ իսկապէս երկնային մարմիններ: Ուրեմն ի՞նչ բան է երկնակամարը: Այդ հարցը ես այսպէս էի վճռում: Եթէ մեր երկիրը կանգնած է առանց նեցուկի, և պահվում է միայն արեգակի զօրութեամբ, ինչու նոյնպէս չեն կարող կանգնել և

արեգակը, և լուսինը, և աստղերը—մտածում էի հս. ինչու նրանք չեն կարող մնալ օդի մէջ, այլ անպատճառ ապակու վերայ: Այդ աւելի Սատուածային կը լինի, աւելի արժանի նրա ամենազօր կարողութեանը. իսկ ապակին— դա մարդու հնարած է, ինչպէս և այն, որ երկիրը փղի և կրիայի վերայ է գտնվում: Երեւում է և ձիշտ է, որ երկնքի լուսատուները ուղղակի օդի մէջ են դանվում և ոչընչի վերայ չեն կանգնած, ինչպէս երկիրը. և թէ նոյն իսկ կապցա երկինքը, որի մէջ նոքա լողում են, հասարակ օդ է, կամ անսահման և դատարկ տարածութիւն: Այդպիսի երկնքում զարմանալի չէ, որ նրանք լողում են մէկ կողմից դէպի միւսը, զբօսնելու բաւականին տեղ կայ... Այ, զրան կասեմ երկինք, իսկական Սատուածային երկինք, որը սահման չունի, ոչ թէ այնպիսի երկինք, որը հնարել է հասարակ մահկանացուն: Նա որ և իցէ վանդակ չէ երկրի համար և ոչ էլ վամփուշա, ինչպէս ինձ թւում էր առաջ: Իսկ եթէ այդպէս է, կարելի է ասել, թէ մեր երկիրը նոյնպէս երկնային մարմին է, որովհետև օդի մէջ է կանգնած. և եթէ կարողանացինք արեգակի կամ լուսնի վերայից նայել երկրին, այն ժամանակ մեզ կը թուար, թէ նա երկնքումն է գտնւում: որովհետև նա հեռու և բարձր, կապցա տարածութեան մէջ կ'երեկ:

Այսպէս էի մտածում և այսպէս էի վճռում

ինձ ու ինձ այս բոլորը: Ի հարկէ, աւելի հեշտ կը լինէր գնալ և քահանային հարցնել (այն ժամանակ փոքր աղան գնացել էր), բայց չ. ուզում էի ինքս իմանալ: Իսկ երբ սկսեցի մտածել, թէ ինչու երկինքը կապցա է, եթէ նա հասարակ օդ է և ոչ ապակի, թէ ինչու ծիածանը կիսաշրջանի ձև ունի, եթէ երկինքը կամարաձև չէ—երբ սկսեցի այդ բոլորը քննել, տեսայ, որ զրանք ուժից վեր են: Համբերեցի և մէկ օր, երբ հիւր էին գնացել, վազեցի քահանայի մօտ: Եկայ—քնած էր: Էհ, բարկութիւնս եկաւ, ամեն անգամ յարմար դէպք չի պատահի: Սպասեցի, ապասեցի, բայց օգուտոս այն եղաւ, որ մողերս քաշեցին, երբ տան վերագարձայ: Իսկ մեր աղախինը այն կողմից մրթմրթաց. ոայ, աեղն է՝ քեզ կլոր: Տեսէ՞ք, ինչե՞ր է մատառում: Դա աղայի գործ է, իսկ քո գործը—այ, —ինքնաեռը կրբակ զցեն է»:

Հնար չ'կար, սպասեցի մինչև բարեկենդանը: Իսկ բարեկենդանին կրկին փախայ, գնացի տէր.հօր մօտ: — Երկինքը ապակուց է թէ ոչ—հարցրի նրան: — Ոչ, միանգամից վրաբերեց նա:

Այսպէս ես իմացայ, որ երկինքը հասարակ օդ է կամ գասարկ տարածութիւն և այնաեղ բոլորովին ապակի չ'կայ, որ երկիրը նոյնպէս մի երկնային մարմին է: Իմացայ և այն, ինչ որ խելքս չեր կարել: Երկնքի կապցա դոյնը—ասաց տէր հայրը, օդի գցնն

է: Ծիածանը ոչ ժապաւէն է, ոչ խողովակ, ոչ էլ Աստուծոյ գօտի. միայն մեր աչքերին է կանաչ և կարմիր թւում, որովհետև արեգակի ճառագայթները ցոլում են անձրես կաթիլների մէջ, ինչպէս կրակը բիւրեղի մէջ և զրանից զըներ են առաջ զալիս: Սյդ պատճառով ծիածանը միայն արեով անձրես ժամանակ է լինում: իսկ առանց արեգակի և անձրես երեք ծիտծան չէ լինում: Տէր հայրը ինձ սովորեց ծիածան շինել եթէ բերանդ քիչ ջուր առնես և փշես, մէջքդ գէպի արեգակը դարձրած, այն ժամանակ ջրի կաթիլներից կը կազմուի նոյնպիսի ծիածան, ինչպէս երկնքումն է լինում:

Վերագրաճայ տուն: Տեսայ, որ չեմ բաւականութու, ինչքան էլ լսեմ նրան: Նրա ամեն մէկ խօսքը աչքերս բաց էր անում: Մարդ ինչքան շատ է գիտենում, այնքան առելի է ցանկանում իմանալ: Տեղեկանալով երկրի և երկնքի մասին, ես սկսեցի մըտածել արեգակի, լուսի ու աստղերի մասին և համբերութիւնս այնպէս հատաւ, որ իսկոյն ուզում էի վաղել քահանայի մօտ: Առաջ ուզում էի լոլորը իմ խելքով իմանալ բայց այժմ տեսայ, որ այդպէս երկար է տեսում: Ինչ բանի վերայ որ ամիսներով ու շաբաթներով զլուխ պիտի տրաքեցնես, զիտեցողը մէկ ժամում կարող է քեզ պատմել: Իսկ շատ բան իմանալու համար շատ էլ ժամանակ է հարկաւոր, եթէ կամենում ես բոլորը իմքդ իմանալ:

Բայց հնար չ'կար. ամեն օր քահանայի մօտ գնալ կարելի չէր: Ա՛խ, եթէ ես կարգալ զիտենայի և մի զիրք ունենայի, որի մէջ այդ ամենը դրուած լինէր, ամեն օր ազատ ժամերիս կը սովորէի: Բայց անձարը կերել է բանջարը: Այդ ժամանակից մտքում դրեցի գրել-կարգալ սովորել ինչ էլ որ լինի. և ես վճռեցի՝ զատկին փոքր աղան որ գայ, խնդրել որ ինձ տանի իր հետ: Իսկ այնտեղ քաղաքում մի կերպով կը սովորեմ: Պէսք է ասել որ ցանկանումէի կօշկակարութիւն ևս սովորել, որպէս զի յետոյ մի կտոր հացի տէր դառնամ: Սպասեցի տօնին: Բայց մինչեւ զատկի տօնի հասնելը, մաքերս հանդարառութիւն չէին տալիս ինձ, իրար յետելից զլիխոս մէջ շարվում էին: Բայց մինչև որ փոքր աղան չ'եկաւ, ոչինչ հետեւանքի չ'հասայ. ոչ մի նոր բան չըտապ:



## ԱՐԵԳԱԿԸ ՇԱՐԺԻՌԻՄ Է ԹԷ ՈՉ

Որ արեգակը զամայի նման տափակ չէ, այլ կոր է և զնտաձեւ, ինչպէս երկիրը, դորա մասին էլ չէի հասկածում: Նոյնպէս գիտէի, որ նա հարիւր միլիոն վերստ հեռու է երկրից, գիտէի, որ նա հինգ հարիւր հազար անգամ մեծ է երկրից, միայն չ' գիտէի, որ նրա շրջապատը ամբողջ երկը միլիոն վերստ է՝ այսինքն, եթէ նրա համար գօտի շինէին, այդ գօտին երեք միլիոն վերստ երկարութիւն կ' ունենար: Չը գիտէի նշյանպէս, որ արեգակին համաելու համար պէտք է ամբողջ երկու հարիւր եօթանասուն հինգ տարի թռչել, անյներով ամեն մի րոպէ մի վերստ: Եւ ուրիշ կերպ լինել չէր կարող: Եթէ նա կարողանում է զէպի իրեն քաշերով միայն՝ ամբողջ երկիրը տիեզերքի մէջ պահել ի հարկէ նա փոքր լինել չէ կարող. իսկ երբ նա հինգ հարիւր անգամ մեծ լիներով երկրից՝ մեր աչքին ափսէի չափ է երեսում, նշանակում է, որ չափազանց հեռու է զրտինում: Սյդ բոլորը հեշտ է ես հասկացայ: Բայց ինձ համար ամենից գժուար էր ըմբռնել այն, որ ոչ թէ արեգակն է ման գալիս երկրի շուրջը, այլ

երկիրը արեգակի շուրջը: Ես երբէք չէի հասկանալ այդ, եթէ ինձ օգնող ըստ լինէր: Բազգիցս աղայիս որդին եկաւ ամասուռայ արձակուրդներին (Զատկին նա չէր եկել): Առաջ ուրիշ հագուաս ունէր նա. իսկ այժմ մշյդկանաշազդյն շոր էր հագել: Սյդ նշանակում էր, թէ ուրիշ ուսումնարան է մտել, որտեղ նշյանպէս հարուստների որդիքն են սովորում: Առաջ զիմնազիսայում ութ տարի էր սովորել իսկ այսաեղ պէտք է չորս տարի սովորէր. դրան համալսարան են տառում: Սյդաեղ շատերը բեխաւոր ու միրուքաւոր մարդիկ են լինում, բայց էլլեւ սովորում են: Ուրեմն ընդամենը 12 տարի են սովորում: Ճշմարիտ, այդքան ժամանակում յիմարներն էլ կը խելքանան: Բայց մէծամեծների որդիքը այդ ամբողջ ուսումը չեն աւարտում շտաերը զիմնազիսն անդամ չեն վերջացնում, կիսատ են թողնում ու ծառայութեան մէջ մանում: Մի հարյուղ լինի, թէ ինչ կայ շտապելու. փորդ կուշա, տեղդ տաք, զիրք կարգայ ու խելքդ աւելացրու, քանի ջահիլ ես: Բայց չի լինում, իրանց օգուար չեն հասկանում: Հա, ասացի, որ աղայիս որդին եկաւ:

Գալուց յետոյ սկսեց աշխատել, որ մեղ մօտ ուսումնարան բացուի: Իսկ ինձ հետ ամբողջ ժամերով խօսում էր. հարց ու փորձ էր անում, թէ ինչ եմ սովորել և ինչպէս. ասում էր, որ իւր հետ պիտի տանի ինձ քաղաք:

Մի անգամ նրան հարցրի, թէ արեգակը ո՞րտեղ  
է լինում զիշերը, ո՞րտեղ է թագնուում մայր մանե-  
լուց յետոյ: Նա պատասխանեց. «արեգակը ոչ մի  
տեղ չէ մանում և ոչ մի տեղից դուրս չէ գալիս,  
մի խօսքով՝ նա բոլորոցին չէ շարժւում»:

— Ինքս էլ զիտեմ—ասացի, որ նա մարդու նման  
ման չէ գալիս և ոտներ չունի. իսկ այնպէս շարժ-  
ւում է, կամ բարձրանում, կամ ցածանում է, օդի  
մեջ կամ վերև է լողում կամ ներքեւ: Բայց նա  
պատասխանեց. «ոչ նա ոչ բարձրանում է, ոչ ցա-  
ծանում: այլ երկիրն է նրա շուրջը ման գալիս»:

— Ի՞նչպէս,—զարմացայ ես:

— Այնպէս, նա չէ կարող պտտել բոլոր երկնա-  
յին մարմինների շուրջը, որոնց ինքը պահում է,  
գէպի իրեն ձգելով: Նա միայն երկիրը չէ ձգում, այլ  
դրա նման ՅՈ երկնային մարմիններ: Եւ այդ լուսա-  
տուններից ամեն մէկի վերայ թւում է, ինչպէս և  
մեզ թէ արեգակը առաւօտները ծագում է և երե-  
կները մայր մտնում: Էլ ինչպէս կարող էր արե-  
գակը նրանցից ամեն մէկի շուրջը պատել: Ոչ Աս-  
տուած աւելի իմաստութեամբ է կարգագրել: Նա  
այնպէս է առաջմանել, որ այդ ՅՈ մարմիններից ամեն  
մէկը վագում է արեգակի շուրջը և ինքը իրեն հա-  
մար գիշեր ու ցերեկ է կազմում: Նյոնպէս էլ մեր  
երկիրը վաղում է արեգակի չորս կողմը:

— Ուրեմն երկիրը մէկ տեղ չէ կանոնած:

— Ի հարկէ ոչ նա երբէք չէ կանգնում: այլ  
միշտ շարժւում է:

— Այդ ի՞նչպէս կարող է լինել: Եթէ երկիրը  
ման գար, մէնք կը զգայինք, որ նա զնում է:

— Երբէք: Օդի մէջ խճուղի չկայ և երկիրը  
սայլ չէ, որ ցնցէ և թխկթխայնէ. երկիրը զնում  
է մեղմ կոկիկ և հաւասար կերպով այնպէս՝ որ  
մենք չենք կարող զգալ նրա շարժուիլը: Օրինակ՝  
նաւոկով գնալու ժամանակ շատ անգամ թւումէ,  
թէ մէկ տեղ կանգնած ես, թէ նաւակը ջրի վե-  
րայ այնպէս սահուն չէ գնում, ինչպէս երկիրը օդի  
մէջն է շարժւում:

— Հաւ, ուրեմն զուրս է գալիս, որ երկիրը տ-  
մեն օր արեգակի չորս կողմը ման է գալիս:

— Ոչ, մէկ օրում նա չէ կարող այդքափ Ճանա-  
պարհ գնալ այդ Ճանապարհը 900 միլիոն վերասէ:  
Ուրքան էլ արագ գնայ երկիրը, այնու ամենայնիւ մէկ  
օրում չէ կարող այդքան արաւածութիւն անցնել:  
Մէկ օրում նա անցնում է միայն երկու և կէս  
միլիոն վերաս: Իսկ իր ամբողջ Ճանապարհը անցնե-  
լու համար նրան հարկաւոր է 365 օր, որ անում  
է 52 շաբաթ կամ 12 ամիս, մի խօսքով ուղիղ  
մէկ տարի: Ահա թէ ինչու ժամանակը տարիներով  
ենք չափում: և աշա թէ ինչու տարին 365 օր ենք  
հաշվում: Սյոնպէս որ մեր տարին ցոյց է տալիս, թէ  
երկիրը մէկ անգամ պատյան եկաւ արեգակի չորս կողմը:

— Այ քեզ բան: Իսկ մնացեալ վաթսո՞ւնը:  
— Ինչպէս երկիրը, նոյնպէս նրանցից ամեն մէկը  
գիտէ իր ճանապարհը:  
— Ուրեմն նրանք բոլորը միասին չե՞ն վազում,  
այլ ամեն մէկը առանձին:

— Ի հարկէ, առանձին, այսինքն ամեն մէկը ու-  
նի առանձին ճանապարհ, թէ չէ նրանք իրար կը  
գիտչին: Նրանցից մէկը, որը ամենից մօտ է արե-  
գակին և որի ճանապարհը, ի հարկէ, ամենից կարծէ է,  
վազում է այդ ամբողջ ճանապարհը 88 օրում, այն-  
պէս որ նրա տարին մերից փոքր է՝ ընդամենը 88 օր:  
Իսկ միւսը, որը ամենից հեռու է արեգակից—մինչև  
անգամ աւելի հետու, քան երկիրը—արեգակի շուրջը  
կարող է պատել միայն 164 տարում մեր հաշուով.  
այնպէս որ նրա տարին մեր ամբողջ դարից աւել է:  
— Պա, պա, պա... ուրեմն այնտեղի մարդիկը մէկ  
տարի էլ գոնէ չեն առլում:

— Այդ արդէն Ս.ստուած միայն գիտէ, թէ նրանք  
ինչքան ժամանակ են ապրում, կամ ապրում են,  
թէ՞ ոչ: Իսկ մենք գիտենք, որ այնտեղ մի բան մի-  
այն մերի նման է, այնտեղ ևս լինում է գիշեր ու  
ցերեկ ինչպէս և մեղանում:

— Կաւ: Բայց այդ ինչպէս է լինում: Եթէ երկի-  
րը ամբողջ տարին պատում է արեգակի շուրջը,  
ինչու երկիրի վերայ ամբողջ տարին ցերեկ չէ լինում:  
այլ լինում է և գիշեր:

— Զարմանալի ոչինչ չ'կայ այդաեղ: Վելցրու  
ձմերուկը կամ գնտակը և նրան պտաեցրու ճրազի  
չորս կողմը: Նա կը լուսաւորուի միայն այն կողմից,  
ուր ճրազն է զտնվում, իսկ նրա միւս կողմը խա-  
ւար կը լինի: Նոյնպէս և երկիրը. որ կողմաւմ լցու  
է, այնաեղ յերեկ է համարւում:

— Այդ ձշմարիստ է, բայց երկիրը արեգակի շուր-  
ջը պատում է ամբողջ տարին. ուրեմն երկրի կէս  
մասում ամբողջ տարին պէտք է լցու լինի, իսկ  
միւս մասում մութ. մէկ տեղ ամբողջ տարին ցե-  
րեկ, իսկ միւս մասում ամբողջ տարին գիշեր:

— Եւ Ճիշտ այդպէս կը լինէր, եթէ երկիրը մի-  
այն արեգակի շուրջը պատեր, բայց նա պատում է  
նոյնպէս և իրեն շուրջը:

— Ինչպէս թէ իրեն շուրջը: Մի՞թէ կարելի է  
իրեն շուրջը պատել:

— Մի՞թէ դու երբէք չես պատել մէկ ոտի վե-  
րայ կանգնած:

— Ուրեմն երկիրն էլ է այդպէս պատում:

— Անպատճառ:

— Բայց ինչպէս կարող է նա այդ երկու գործը  
կատարել: Եթէ պատուում է, չէ կարող առաջ գր-  
նաւ իսկ եթէ առաջ է գնում, չէ կարող պատուել:

— Ինչո՞ւ չէ կարող: Վերցնենք, օրինակ պատուա-  
կը կամ բղզանը: Բղզանը որ բաց ես թողնում, ին-  
քըն իրեն պատում է և յատակի վերայ վազում:

Երեւակայիր այժմ թէ սենեակի յատակի վերայ զըսուած է ձրագը և բզզանը վաղում է նրա մօսով, դու կունենաս արեգակի և երկրի օրինակը: Արեգակը, ինչպէս ձրագը, տեղից չե շարժուիլ, իսկ երկիրը, ինչպէս բզզանը, կը վագէ նորա չորս կողմը և միւնոյն ժամանակ իրեն շուրջը կը պտտուի: Իսկ պտտուելով նա կամ իր մէկ կողմը կը դարձնէ զէպի ձրագը, կամ միւս կողմը, ուրեմն ամեն մէկ կողմի վերայ կը լինի կամ ցերեկ, կամ գիշեր: Եւ այսպէս երկիրը մինչեւ մէկ շրջան անելը արեգակի չորս կողմը 365 անգամ կամ երեսը դարձնում է զէպի արել կամ շուռ է տալիս: Այդ պատճառով նրա համար տարին ունենում է 365 ցերեկ և 365 գիշեր: Իսկ իւր շուրջը երկիրը պտտում է ոչ թէ մէկ րոպէում, ինչպէս բզզանը, այլ ամբողջ 24 ժամ է հարկաւոր, որ նա մէկ պտոյս անէ: Այդ պատճառով մեր օրը՝ այսինքն ցերեկը և գիշերը միասին հաւասար է ուղիղ 24 ժամի. այնպէս որ՝ մէկ օրը նշանակում է, թէ երկիրը մէկ անգամ պտտուեց ինքն իր շուրջը:

— Հասկացայ, հասկացայ: Այժմ իմանում եմ:

— Իսկ զիտե՞ս, թէ ուրիշ ի՞նչն է պտտում երկրի նման:

— Պտտուակը, բզզանը...

— Ելի ի՞նչը:

— Ուրիշ էլ ի՞նչ պիտի լինի. կարելի է անիւր:

— Յետից:

— Այլ ես չկիտեմ:

— Ահա... իսկ կոպէկանոցը: Գիտե՞ս, երբ նրան փռուցնում ես սեղանի վերայ...

— Այո, այո, ձշմարիտ ես ասում: Եւ զիտե՞ս, եթէ այդ բզզանի կամ պտտուակի կամ կոպէկանոցի վերայ նստած լինէր մէկ ձանձ, նրան նյոյնպէս կը թւէր, թէ բզզանը չէ պտտում, այլ ձրագը, որի շուրջը բզզանը վաղում է: Երբ բզզանը ձանձին դարձնում է զէպի ձրագը, նա կարծում է, թէ ձրագը, իրու մի արև ծագում է. իսկ երբ բզզանը շուռ է գալիս, կարծում է, թէ նա մայր մտաւ: Նյոյնը կարելի է ասել արեգակի մասին: Բայց միայն արեգակը այգպէս չէ թւում. նյոյնը պատահում է, երբ նաւակով շատ արագ գնում ես և շուրջդ նայում: Այդ ժամանակ թւում է, թէ ինքդ չես գընում, այլ ափերն են վաղում, բայց նրանք ի հարկե տեղից չեն շարժում: Այս, տեսնում ես, որ միշտ չէ կարելի մեր աչքերին հաւատալ: Նյոյնպէս էլ արեգակի մասին. աչքերին չը պէտք է հաւատալ, թէ նա ծագում է և մայր է մանում, թէ նա բարձրանում է և ցածանում...

Այդ որ ասաց, յանկարծ տեղեցս ցատկեցի. և քամի առածի նման գուրս թռայ: Աղան յետեիցս կանչեց. «Համբերի՛ր, համբերի՛ր. մի խօսք էլ...» բայց ես ուշք չ'պարձրի: Ուղում էի մի բզզան ձարել և

բղղացնել, այնպէս որ նա շուռ գայ երկրի նման: Բղղանը զտայ, մէկ ձանձ էլ մեղրամոմով նրա կողքին կպցրի և սկսեցի պատացնել... Միայն ավասոս, արագ եր շուռ գալիս անպիտանը, և իսեղծ ձանձը բոլորովին չէր երկում: բայց ինչքան զիշեր և ցերեկ անցան նրա վերայ, ինչքան տարիներ նա պատեց ճրագի շուրջը, մինչև որ եկաւ մեր աղախինը և մաղերից քաշեց:

—Տես, ինչով է պարապում, ասայ նա: —Գործ չունի է...

—Եխոր, սա հասարակ բղղան չէ—պատասխանեցի ես:

—Հապտ ի՞նչ տեսակ է:

—Քրաշալիք բան է, երկրի նման պատռում է: Որ, զիշեր, ի՞նչ ասես, որ նրա վերայ չ'լինի:

—Հողակ յիմար զիխիդ: Կրկին քաջքերդ եկան:

—Քաջքերը չեն եկել, բայց ես Պետրոս աղայի հետ պիտի գնամ քաղաք:

—Յիմար, քո ի՞նչ տեղն է քաղաքը: Այնտեղ իսկոյն անխւի տակով կանեն քեզ և կը սպանեն:

—Էհ, ինչ անենք, անխւն էլ լու բան է, նա ել ինչպէս երկիրը երկու գործ է կատարում:

—Եհ, սկսեց էլի զլիկց գուրս տալ: Երես են տուել բոլորովին երես են տուել:

### ԼՈՒՍԻՆԸ ՍԵՊՐԱԿԱՆ ԼՈՅՍ ՈՒՆԻ՞ ԹԷ ՌԴ.

Աւելորդ է ասել, որ լուսինը նյոնպէս կը օր է, ինչպէս և երկիրը, այսինքն՝ ձմերուկի նման ամեն կողմից կը օր է: Եւ եթէ նա տափակ է երկում, դրա պատճառը այն է, որ մենք տեսնում ենք նրա մէկ կողմը միայն, իսկ միւս կողմը չենք կարեղ նկատել, որովհետեւ նա շուռ է եկած: Նյոնպէս ամենքը հեշտութեամբ կը հասկանան, որ լուսինը բոլորովին փոքր չէ այնպէս, ինչպէս մեզ թւում է, եթէ նրանք արդէն զիտեն այն, ինչոր ես իմացայ մինչև հիմայ: Այդ պատճառով ես չ'զարմացայ, երբ Պետրոս աղան ասաց, թէ լուսնի շրջապատը 11 հազար վերաս է, ուրեմն նա երկրից փոքր է, եթէ նրա և երկրի համար գօտի շինէին, երկիրը չորս անգամ մեծ կը լինէր: Բայց նա էլ փոքր չէ: Պետրոս աղան ասում է, եթէ լուսնի վերայ կանգնէինք և երկրի վերայ մտիկ տայինք, այն ժամանակ երկիրը մազի չափ կ'երեկը, այսինքն չորս անգամ մեծ, քան լուսինն է երկում: Եւ եթէ լուսնի վերայ մարդիկ լինէին, շատ կարելի է, որ նրանք կարծէին, թէ մեր ամեսողջ եր-

կերը մաղից մեծ չէ և թէ նա զնտաձեւ չէ, այլ տափակ: Բայց զարմանքից բերանս բաց մնաց, երբ լսեցի, թէ լուսինը, այն լուսինը, որ զիշերը լցու է տալիս մեզ ինքն ըստ ինքեան խաւար է, ինչպէս մեր երկիրը: Ինչպէս թէ խաւար է, մոտածում էի ես, քանի որ մեր աչքերով տեսնում ենք, որ նա լուսաւոր է: Էհ, աչքերով շատ բան ենք տեսնում: Աչքերով տեսնում ենք, թէ երկիրը ծայր ունի, թէ երկինքը կամարաձեւ է, թէ արեգակը գաթայի մեծութիւն ունի, թէ զանգակատան խաչը մէկ արշին է, թէ արեգակը ման է դալիս, թէ ափերը վազում են—բայց այդ բոլորը աչքի խաբէութիւն է: Ինչպէս երեւում է, բայց աչքերից խելքն էլ պէտք է տեսնէ, թէ չէ առանց այդ ակնոցի նրանց բանը բուրդ կը լինի: Այ, օրինակ, ստուգել են, որ լուսինը՝ ձշմորիտ է, լցու է տալիս, բայց այդ լցուը իրենը չէ: Նա փայլում է այնպէս, ինչպէս սենեակի պատը. Եթէ լուսամուտից պատի վերայ լցու է ընկնում, նա փայլումն է և նրան կարելի է տեսնել. նոյնպէս երեկոյեան, եթէ նորա վերայ ընկնում է կրակի լոյսը, նա գարձեալ լցու է տալիս, իսկ զիշերը, երբ ոչ լուսամուտից է լցու ընկնում և ոչ կրակից, նրան կարելի չէ տեսնել, այնպէս, որ շատ անդամ խաւարի մեջ զլուխդ կարող է պատին դիպչել: Եւ այդ բոլորը նրանից է, որ պատը ինքն իրենից լցու չէ արձակում, նա ինքը խաւար է և միայն այն ժամանակ:

մանակ է լուսաւորում և նկատում, երբ նրա վերայ ուրիշ լցու է ընկնում: Նոյնպէս և լուսինը: Նա ևս փայլում է, բայց ոչ իրեն, այլ արեգակի լուսով, և փայլում է միայն այն ժամանակ, երբ արեգակը նրան լուսաւորում է. իսկ եթէ չէ լուսաւորում, նա էլ չէ փայլում, այդ պատճառով լուսինը միշտ չէ երեսում: Միևնույնը պատահում է մեր երկրի հետ. նա թէե խաւար է, փայլում է հիռուից, նա պատի և լուսնի նման հետ է գարձնում արեգակի լոյսը: Իսկ եթէ ցերեկով կարողանայինք նայել երկրին լուսնի վերայից՝ նա փոքրիկ սպիտակագոյն ամպի նման կ'երեկը, ինչպէս լուսնեակն է երեսում ցերեկով: Լուսնի գցնից էլ կարելի է իմանալ, որ նրա լցուը արեգակի լոյսի նման չէ. արեր կարծես ոսկուց լինի, իսկ լուսնեակը արծաթից լինի. արեւին չես կարող նայել իսկ լուսնին, որքան քէֆդ է, նայիր. արեգակի լցուը պայծառ է, պըսպղուն, կայծեր է արձակում, իսկ լուսինը գունատ, կաթնագոյն և հանդարտ: Իսկըն երեսում է, որ մեկի լոյսը շատ է, իսկ միւսինը քիչ: Ասում են, թէ նոյնպիսի տարբերութիւն կայ երկնային մնացած լուսատուների, այսինքն աստղերի մէջ: Նրանցից միքանիսը ինքնափայլ են, այսինքն սեպհական լոյսով են փայլում. դրանց արեգակներ են ասում: Իսկ միւսները ուրիշել լուսով են փայլում. զրանք էլ մոլորակներ են կոչում:

— Իւչպէս — բացագանչեցի ես — արեգակներ: Միթէ արեգակներ շատ կան, մի՞թէ մէկը չէ:

Եւ ի՞նչ էք կարծում, դուրս է գալիս, որ արեգակը իսկապէս մէկը չէ աշխարհում: մինչեւ անգամ երկու կամ երեք չեն, այլ մի ահազին խռում են կազմում: Բայց եթէ նրանք արեգակի նման մեծ և փայլուն չեն երեսում, այդ նրանիցն է միայն, որ չափից դուրս հեռու են մեզանից: Եւ եթէ ուզումէք իմանալ, թէ աստղերից որն է արեգակ, և որը հասարակ մալորակ, մաիկ տուէք նրանց լցուին: չ'սայած այդչափ հեռաւորութեանը՝ կարելի է արեգակները ջոկել մոլորակներից: Եթէ աստղը շողջում է և փայլիլում, եթէ նրա լցուը դողլողում է և պէծին տալիս, ինչպէս կրակը — դա արեգակ է, իսկ եթէ աստղը փայլում է թոյլ և խաղաղ կերպով, եթէ նրա լցուը ճպճպում է և կայծեր չէ արձակում — դա մոլորակ է: Մեղ ամենամօտ լուսաւոր աստղը արեգակն է, իսկ ամենամօտ խաւար մոլորակը — լուսինն է, այդ պատճառով նրանք միւսներից մեծ են երեսում մեզ այդ պատճառով նրանց միւսներից լաւ ենք տեսնում:

— Իսկ ինչից է շինուած լուսինը, եթէ խաւար է և ինչից է շինուած արեգակը, — կրակից թէ ոսկոց, որ ինքն իրեն փայլում է:

— Ոչ կրակից, ոչ էլ ոսկոց: Եթէ կրակից լինք — նա վաղուց այրուած վերջացած կը լինէր կամ

այրուելուց օրէցօր կը փոքրանար գոնէ: Եթէ ոսկոց լինէր — նա չէր կարող այնպէս զօրեղ փայլել և տաքաջնել ինչպէս այժմ: Մի խօսքով մարդիկ չ'գիտեն, թէ արեգակը ինչից է շինուած և ինչու նրա լցուը այնպէս զօրեղ է: Նշնապէս չ'գիտեն, ինչից են շինուած լուսինը և միւս մոլորակները: Միայն գիտեն, որ մի քանիսը աւելի կակուղ և թեթև նիւթից են կազմուած, քան թէ մեր երկիրը: Իսկ միւսները աւելի պինդ և աւելի ծանր նիւթից են կազմուած, քան թէ մեր երկիրը:

— Իսկ այդ ինչից է պատահում, որ լուսինը կամ մեծանում կամ փոքրանում է:

— Որովհեաւ նա ինքն լսու ինքնան խաւար է: Մասսամբ էլ նրանից է, որ նա պատում է երկրի շուրջը:

— Ուրեմն ճիշտ որ նա ման է գալիս: Դա աչքի խարէութիւն չէ արեգակի նման:

— Ոչ, խարէութիւն չէ. ճիշտ է, որ նա ման է գալիս: Երկիրը լուսինն պահում է աշխարհի մէջ, այսինքն նրան դէպի իրեն է քաշում, նա էլ երկրի շուրջը ման է գալիս:

— Լաւ, հապա ինչու նա զանազան մեծութիւն է ունենում:

— Զանազան մեծութիւն չէ ունենում, այդ մեր աչքերին է թւում, նա միշտ միւնցին է: Իսկ ահա թէ ինչու մեզ այդպէս է թւում:

Այդ միջոցին Պետրոս աղան ճրազը դրեց սեղանի վերայ, ինձ սեղանի մօտ նստացրեց, իսկ ինքը յետելից կանգնեց ձեռքին րոնած մէկ թել, որի ծայրից կապած էր մէկ գնտակ: Երեկոյ էր:

—Երեսկայիր—ասաց նա, թէ այդ ճրազը արեգակին է, քո զուխը—երկիրը, իսկ այս գնտակը—լուսինը: Սյժմ նայիր այսաեղ:

Յետ նայեցի, տեսնեմ՝ գնտակը կախուած է զըւխիս վերելը:

—Դրանից լ՞ու—ասացի ես:

—ԱՇ ինչ: Սյս գնտակը փայլում է թէ ոչ:

—Փայլում է:

—Ինչիցն է այդ:

—Որովհետեւ ճրազը նրան լուսաւորում է:

—ԱՇ, լուսնեակը նոյնակէս փայլում է, որովհետեւ արեգակը նրան լցու է տալիս: Իսկ այժմ ասա, ամբողջ գնտակն է փայլում, թէ ոչ:

—Ի հարկէ, ամբողջ գնտակը:

—Սուտ ես ասում, փայլում է միայն գնտակի այն մասը, որ դարձած է զէպի քեղ և զէպի ճրազը, իսկ ոչ այն մասը, որ զէպի ինձ է նայում:

—Ի հարկէ, պատաօխանեցի ես—ձեր կողմը շուռ եկած մասը խաւար է, իմ կողմը լուսաւոր է ամբողջովին:

—Սյս, միայն կէսը և ոչ ամբողջը: Նա ամբողջովին չէ կարող լցու լինել քանի որ արեւ ճառա-

դայթները միաժամանակ նրա երկու կողմի վերայ չեն լընկում, այլ մէկ կողմի: Սյս կլ քեզ լուսնի լըսումն, այսինքն այն ժամանակը, երբ լուսինը երկրի մօտով անցնելիս՝ զէպի քեղ է դարձրել ամբողջ այն մասը, որը լուսաւորուած է արեգակից: Հէնց դրա համար էլ լուսնի լըսումն են ասում, որ լուսնեակի աչքով աեսանելի մասը ամբողջովին լուսաւորուած է:

Յետոյ Պետրոս աղան գնտակը պատեցրեց իմ շուրջը և աջ ուսիս մօտ պահեց:

—Այ, սա լուսինն է—ասաց նա, երկրի շուրջը ման է գալիս և ծանապարհին համառում է այսակը: Սյժմ նայիր սրա վերայ:

Իսկ ես առանց այն էլ աչքերս նրանից չէի հեռացնում:

—Սյժմ լուսնեակի որ մասն է լուսաւորուած—հարցրեց նա: Էլի ամբողջ կէսը, թէ ոչ:

—Ո՛չ, ամբողջ կէսը չէ, կէսից շատ քիչ

—Սյսինքն որքան, ութերորդ մասը, թէ քառորդ:

—Համարես թէ քառորդը:

—Ճիշտ է, զլան ասում են առաջին կամ երկրորդ քառորդ լուսնի: Սյսինքն միայն մէկ քառորդն է երեսում մեզ իսկ մնացեալ մասը խաւար է, այդ պատճառով էլ չենք կարողանում աեսնել:

—Ո՛չ աղոս: Սյդաեղ սխալում ես արգէն:

—Ինչպէս:

— Այլ ինչպէս, թէպէտ լոյսը ամբողջ զնտակի վերայ չէ ընկած, բայց ես նրան ամբողջովին տեսնում եմ, տեսնում եմ և այն մասը, որի վերայ լոյսը ընկած է և այն մասը, որ խաւար է: Իսկ լուսնեակի վերայ այդպէս չէ. այնտեղ բոլորովին չէ կարելի տեսնել այն, ինչ որ չէ լուսաւորուած:

— Այդ չէ նշանակում, որ ես սուտ եմ ասում. նշանակում է, թէ սենեակը բոլորովին այն չէ, ինչ որ աշխարհը: Անսեակում կան պատեր, այդ պատերի վերայ ընկնում է ծրագի լոյսը և գրանից նրանք քիչ փայլում են: Այդ պատճառով զնտակը, որի վերայ մէկ կողմից ձրագն է լոյս սփռում, միւս կողմից էլ ստանում է պատի լոյսը, որը սակայն թոյլ է չափազանց:

Դորա համար էլ կարողանում ես տեսնել թէպէտ ոչ այնքան պարզ բայց այնու ամենայնիւ տեսնում ես: Իսկ աշխարհում պատեր չկան և լուսնեակը բացի արեգակից ոչ մի տեղից լոյս չէ ստանում և այդ պատճառով նրա միւս երեսը բոլորովին խաւար է մնում, այնպէս որ այն մասը բոլորովին անտեսանելի է դառնում մեր աչքին, ինչպէս և անտեսանելի կը լինէր զնտակը, եթէ նրա վերայ չընկնէր ոչ ձրագի, ոչ պատի լոյսը: Հիմա այդպէս է, թէ ոչ:

— Կարելի է այդպէս է:

— Իէ, այժմ նորից մարի տուր:

Եւ նա նորից առաջ առրաւ զնտակը և ձրագի ու դէմքիս մէջ տեղում պահեց, իսկ ես դարձեալ աչքս չէի հեռացնում նրանից: Ուր որ զնտակը զընում էր, երեսս դարձնում էի դէպի այն կողմը:

— Այժմ զնտակի որ մասն է քեզ լոյս թւում:

— Այժմ ոչ մի մասը. այսաեղի կոսը ամբողջովին խաւար է:

— Տեսնում ես: Ինչի՞ց է այդպէս:

— Ուրիշ ինչից պէտք է լինի, եթէ ոչ նրանից, որ ձրագն այն կողմն է դանւում, և ոչ իմ կողմն:

— Այո, զնտակը քեզ համար բոլորովին խաւար է և դու միայն այն պատճառով ես տեսնում նրան, որ քո կողմից պատը քիչ լուսաւորում է: Իսկ լուսնեակը բացի արելից ոչ մէկ տեղեց չէ կարող լոյս ստանալ. և այդ պատճառով երբ նա ձանապարհին գալիս է այսաեղը, այսինքն հանում է արեգակի և երկրի մէջ տեղը, այն ժամանակ մեզ համար բոլորովին անտեսանելի է դառնում նա: Դրան ասում են լուսնի ծնունդ, այսինքն՝ նոր լուսինը իբր թէ ծնունդ է, իսկ հինը իբր թէ մեռնում է:

— Այժմ հասկացայ, թէ ինչ է նշանակում լուսնի ծնունդը: Այդ նշանակում է միայն, որ լուսինը հեռանում է այնտեղից, որտեղ նա չէր երեւում, որտեղ իբր թէ մեռել էր: Իսկ ես կարծում էի, թէ նա ձշմարիտ ծնունդ է և մեռնում, ինչ-

պէս մարդը և թէ այդ պատճառով, երբ նա ծըն-  
ւում է, մարդիկ ուրախանում են և աշխատում  
են կամ լաւ մարդու երես տեսնել կամ արծաթ  
փողի նայել:

— Թող, այդ բոլորը պառաւ կանանց դործ է:  
Դու մարդ տուր այստեղ:

Եւ Պետրոս աղան առաջ տարաւ իւր գնաակը:  
Նա կամաց-կամաց քաշում էր և ասում. նայիր,  
ի՞նչպէս գնտակը աւելի և աւելի լուսաւորւում է.  
սկզբից լոյսը փոքր է, յետոյ քիչ-քիչ շատանումէ,  
լայնանում է և վերջապէս ահա քեզ: Այդ միջոցին  
նա կանգնեցրեց գնտակը ուսիս դէմ և հարցրեց.—  
այժմ լուսնի որ մասն է երեսում:

— Կրկն մէկ քառորդը: Այժմ ես հասկանում  
եմ, ինչու է այդպէս, դու մի՛ ասիր:

— Լաւ, ասաց նա: Եւ իր լուսնեակը կրկն յետ  
տարաւ այնպէս, որ ես ստիպուած էի զլուխս կրկն  
յետ գարձնել: Երբ գնտակը հասաւ այնտեղ որտեղից  
դուրս էր եկել նորից կանգնեց:

— Այժմ որ ժամանակն է, հարցրեց Պետրոս աղան:

— Ինչ ասել կ'ուզէ, այժմ լուսնի լրումն է:  
իսկ յետոյ եթէ գնտակը նորից տանես առաջուայ  
Ճանապարհով, նա կը սկսի փոքրանալ, պակասել,  
մինչեւ որ բոլորովէն կ'անհետանայ. իսկ յետոյ նո-  
րից կը սկսի մեծանաւ և այլն... և այսպէս կը շա-  
րունակուի: Բայց գիտե՞ս, աղա, ժողովուրդը ասում


է, թէ լուսինը մէկը չէ, այլ 12. մէկը մէծ, միւսը  
փոքր, թէ նրանցից որը երկնքում երեսում է, նրան  
էլ տեսնում ենք, իսկ որոնք թագնուում են, նրանց  
չենք տեսնում:

— Ժողովուրդը շատ բան կ'ասէ, բայց նոյն իսկ  
ժողովուրդը ասում է, որ «ուսումը լոյս է, իսկ  
տղիտութիւնը խաւար», միւնցն ժողովուրդը ա-  
սում է, որ իրանք խաւար մարդիկ են: Վերջապէս  
կարելի է ժողովուրդը 12 լուսին ասելով, ուղղակի  
տարուայ 12 ամիսն է հասկանում, ոչ թէ 12 երկ-  
նային մարմններ զանազան մեծութեան:

— Հա, միւս ընկաւ. ինչու տարուայ մէջ 12 ա-  
միս են հաշւում:

— Այդ ուրիշ անդամ կ'ասեմ քեզ. այսքանը  
այժմ բաւական է:

— Լաւ, թող այդպէս լինի:



առաջ օնք ովհ է և այս պատճեամ անդ է նույն անուշը զար նույն անդ առաջ ունի առ առաջ անդ առ առ անդ առ առ անդ:

ԱՅ.

### ԹԵ ԻՆՉՊԻՍ Է ՄԱՆ ԳԱԼԻՍ ԼՈՒԽԻՆԸ

— Խողրեմ ասես, ինչու տարին 12 ամիս ունի:  
 — Դու արդէն լսել ես, որ լուսինը մէկ տեղ չէ  
 կանգնած, այլ միշտ ման է գալիս երկրի շորս կողմբ:  
 Մէկ տարում նա 12 անգամ պատում է երկրի  
 շուրջը, այդ պատճառով էլ տարին 12 ամիս ունի:  
 — Տամնե՞րկու անգամ:

— Եյ՞ս:

— Բայց ինչու նա միշտ հաւասար չէ զնում,  
 մէկ անգամ 30 օր, միւս անգամ 31 օր:

— Նա հաւասար է զնում, բայց մենք հաւասար  
 չենք հաշում: Գիտե՞ս, մէկ տարում լուսինը երկրի  
 շուրջը պատում է ոչ թէ ուղեղ 12 անգամ, այլ  
 քիչ աւել բայց ոչ 13 անգամ: այդ պատճառով  
 կուզես 12 հաշենք, կուզես 13, միւնցն է, սխալ  
 է գուրս գալիս և պէտք է կամ աւելացնել ամսուայ  
 օրերը, կամ պակասացնել: Եւ որովհեակ մենք ըն-  
 դունել ենք արդէն 12 ամիս, ուրեմն ամեն ամսին  
 պէտք է աւելացնել մի քանի օր:

— Ամեն մէկին քանի՞ օր ենք աւելացնում:

— Մէկ-մէկ օր, երբեմն էլ երկու օր:  
 Բանը նրանումն է, որ լուսինը երկրի մօտով մէկ  
 անգամ շրջում է  $29\frac{1}{2}$  օրում, այնպէս որ ամիսն էլ  
 պէտք է  $29\frac{1}{2}$  օր լինէր: Բայց այդպէս հաշուելով՝  
 տարին 12 ամսից աւել կը լինէր. այդ պատճա-  
 ռով պէտք է ամսուայ օրերը աւելացնել: Բայց եթէ  
 ամեն ամսին մէկ մէկ օր աւելացնէնք, քիչ կը լինէր,  
 իսկ եթէ երկու երկու օր, շատ կը լինէր. գուրս է  
 գալիս, որ մէկ ամսում պէտք է մի օր աւելացնել,  
 իսկ միւսում երկու. այդ պատճառով մի քանի ամիս-  
 ներ 30 օր են ունենում, միւսները 31: Բայց այդ էլ  
 այնքան ուղեղ չէր լինի: գորա համար մէկ ամսին այն  
 է փետրուարին ոչ թէ աւելացրել են, այլ պակասաց-  
 րել են նրանից մէկ օր. այդ է պատճառը, որ փետրուա-  
 րը 28 օր ունի: Վերջապէս բոլորովին ուղեղ հաշուելու  
 համար խրաբանչեւը 3 տարուց յետոյ փետրուար  
 ամսին էլ աւելացնում են մէկ օր, այդ պատճառով  
 նահանջ տարու փետրուարը 29 օր է ունենում, և  
 ոչ 28:

Հիմա գու ինձ տան, զիտե՞ս ինչու համար են  
 շաբաթները:

— Ճշմարիան ասած, չը զիտեմ:

— Կարող ես այնպէս հասկանալ Ամիսը նրանից  
 է, որ լուսինը մէկ անգամ երկրի շուրջը ման է գալիս,  
 իսկ շաբաթը:

— Զի զիտեմ, ի՞նչպէս ասեմ:

—Մտածիր, չէ՞ որ ամիսը 4 շաբաթ ունի, ինչու չէ 5 կամ 3:

—Հըմ... չէ՛, չը գիտեմ, աղա՛:

—Ե՛հ, ինչպիսի աղայ ես: Միտդ բեր իմ գընդակը, երբ նա զլխիդ շուրջը ման էր դալիս, ի՞նչ փոփոխութիւններ էին պատահում:

—Զը լինի՞ թէ, դա լուսնի քառորդներն են:

—Տեսնում ես, որ գիտես: Մէկ շաբաթը լուսնի առաջին քառորդն է, երկրորդ շաբաթը երկրորդ քառորդն է և այլն... Զորս քառորդ է և չորս շաբաթ:

—Այդպէս է, այդպէս: Բայց մի անգամից դըժուար է հաօկանալ:

—Միայն լաւ իմացիր, որ այստեղ էլի մէկ փոքրիկ սխալ կայ: Լուսինը չըլս քառորդ ունի, իսկ մէկ ամիսը 4 շաբաթից քիչ աւել է: Այդ կրկին նրանից է, որ մեր ամիսները 28 օրից աւել են. բացի դրանից 30 օրը, ի՞նչ տեսակ էլ 4 բաժին անենք, ամբողջ թուեր չենք կարող սասանալ: Այսինքն չենք կարող այնպէս անել, որ ամեն մէկ քառորդ ունենայ 7 կամ 8 օր: Իսկ եթէ ամեն մի շաբաթը հաշուենք եօթ ու կէս օր, շատ անյարմար կլինէր:

—Լաւ, այդ թողնենք: Խնդրեմ ինձ այս ասա, լուսնի վերայ մարդիկ կան թէ ո՛չ:

—Այդ ոչ ոք չէ իմանում: Կարծեօք մարդ չկայ, բայց Աստուած գիտէ:

—Ինչու չը կայ:

—Որովհետեւ այնտեղ մարդիկ չեն կարող ապրել, թէպէտ այնտեղ ցերեկ և զիշեր լինում է, բայց ոդ չը կայ:

—Իսկ զիշեր և ցերեկ լինում է:

—Լինում է:

—Նոյնպէս ինչպէս մե՞զ մօտ:

—Քիչ զանազանութիւն կայ: Որովհետեւ այնտեղի օրը հաւասար է մեր  $29\frac{1}{2}$  օրուան և ո՛չ 24 ժամին:

—Ինչու այնտեղի օրը աւելի մեծ է:

—Որովհետեւ լուսինը աւելի կամաց է պտտում իւր շուրջը, քան թէ երկիրը:

—Նա էլ է իր շուրջը պտտում:

—Անպատճառ:

—Ուրեմն նմ էլ երկու գործ է կատարում: Համ երկրի շուրջն է ման դալիս, համ էլ իրեն շուրջը պտտում:

—Այո՛, բայց այդ քիչ է: Լուսինը ուրիշ գործ էլ է կատարում: պտտում է և արեգակի շուրջը:

—Արեգակի շուրջն էլ:

—Հապա ի՞նչպէս էիր կարծում: Զէ՞ որ երկիրը արեգակի շուրջը ման է դալիս. իսկ երկիրը որտեղ գնում է, լուսինն էլ յետելից:

—Ա՛խ, մոռացէլ էի, որ երկիրը նրան ձգում է և այդ պատճառով նա վազում է երկրի յետելից:

— ՚ ի հարկէ: Եւ նա երկրի հետ պիտի անցնի ամբողջ ձանապարհը, այսինքն արեգակի չորս կողմը, այնպէս որ լուսինն էլ ունի իր տարին: Մէկ անգամ որ իրեն շուրջը պաշտ է գալիւ, այդ նրա համար մի օր է, մէկ անգամ որ երկրի չորս կողմով անցնում է, այդ նորա ամիսն է ( $29^{1/2}$  օրը). մէկ անգամ որ երկրի հետ միասին արեգակի շուրջը ման է գալիս, այդ նրա համար մէկ տարի է (365 օր է):

— Իսկ շաբաթներ ունի՞ նա:

— ՚ ի հարկէ ունի, որովհետև քառորդներ ունի: Մեր շաբաթներն էլ նրա քառորդների վերայ են հիմնած, միայն այնտեղ ոչ ոք չը կայ, որ շաբաթները և տարիները հաշուի:

— Ճիշտ է: Հապա, ասացէք ինչո՞ւ այնտեղ մարդիկ չը կան:

— Որովհետև օդ չը կայ, առանց որի մարդիկ ապրել չեն կարող:

— Իսկ ինչո՞ւ այնտեղ օդ չը կայ:

— Եղափէս է շինուած այդ մոլորակը, երեկի բը-նակութեան համար չէ ստեղծուած:

— Իսկ կարելի՞ է երկրից թռչել այնտեղ:

— Ո՛չ չէ կարելի: Ո՛չ միայն այնտեղ, այլ մինչև անգամ չէ կարելի թռչել երկրից 10 վերստ հեռու, որովհետև ինչքան հեռանում ես, այնքան օդը քչանում է, այնպէս՝ որ վերջը շունչ քաշել անգամ անկարելի է լինում: Թռչել կարելի էր մի

կերպ, բայց ապրել անհնար է: Եթէ մինչև անգամ ի-րեն լուսնի մօտն էլ թռչենք, էլի օգուածը քիչ կը լի-նէր, որովհետև տեղ հասնելուց յետոյ մէկ ըսպէ անգամ չէինք կարող ապրել:


— Ուրեմն միայն երկրի՞ վերայ մարդիկ կան:

— Եյդ ինքս էլ չը զիտեմ հաստատ: Կարելի է ուրիշ մոլորակների կամ աստղերի վերայ, որտեղ օդ կայ, կան և մարդիկ կամ մարդկանց նման արարածներ, բայց միայն այս է հաստատ յայտնի, որ լուսնի վերայ օդ չը կայ, ուրեմն նրա վերայ չեն կարող դանուել մարդիկ, անասուններ և մինչև անգամ բց-սեր: Իսկ միւս կողմից եթէ օդ չը կայ, ուրեմն չը կայ ո՛չ քամի, ո՛չ այն կապջոտ կամարը, որ բարձրից երեսում է. նոյնպէս չը կան ո՛չ գետեր, ո՛չ ջրեր, ո՛չ թռւխպեր, ո՛չ ամսպեր: Այնպէս որ թէե լուսի-նը ինքը շատ գործ է կատարում, ինչպէս գու ա-սում ես, բայց նրա վերայ գործ չը կայ բոլորովին: Մի խօսքով մէկ տիսուր և մեռած աշխարհ է: Ի՞նչ կեանք պիտի լինի այնտեղ ուր ո՛չ գագան կայ, ո՛չ մարդ, ո՛չ ծառ կայ, ո՛չ թռւփ. ուր ո՛չ անձ-րե է լինում, ո՛չ քամի, ուր մշտական լոռմթիւն ու խաղաղութիւն է տիրում, ինչպէս զերեղմանի մէջ...

— Իսկ ինչո՞ւ լուսնի վերայ նկատում ենք տե-սակ-տեսակ բաներ:

— Եյդ ուղղակի նրանիցն է, որ լուսինը հարթ չէ և նրա վերայ ստուելներ են լինում: Լուսինը

նոյնպէս անհարթ է, ինչպէս և երկիրը. Նրա վերայ  
կան սարեր ու ձորեր: Այդ սարերի մէկ կողմը մութ  
է, միւս կողմը լցու. այդ պատճառով նրանք ինչի  
նման ասես, կարող են երևել:



XXX.

### ԻՆՉԻՑ Է ՅԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՐԵԳԱԿԻ ԽԱՀԱՐՈՒՄԸ

Մեր զիւղի ուսումնարանը վաղուց է բացուել:  
Սյնքան աշակերտներ էին հաւաքուել, որ մի մարդ  
չէր կարող դաս տալ: Պետրոս աղան խնդրեց զիւղի  
գրագրին և մի ուրիշ գրագէտ մարդու, որ իրեն օդ-  
նեն. բայց էլի բաւական չէր: Ես նոյնպէս գնում  
էի ուսումնարան, բայց սովորելու ժամանակ չէի ու-  
նենում. մեծ մասամբ դէս ու դէն էի վազում: Կամ  
զրեր պէտք էր բերել կամ մատիտներ, կամ թուղթ,  
կամ սյս բանի յետեկց պէտք էր գնալ կամ այն:  
Խոկ արձակուրդները շուտով վերջացան և Պետրոս  
աղայի քաղաք գնալու ժամանակը հասաւ: Սկսե-  
ցինք Ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Այդ  
բոլոր ժամանակը ես զբաղուած էի և աւելի ոչինչ  
չիմացայ, բայց Ճանապարհին ազատ էինք արդէն.  
ամբողջ օրը Պետրոս աղայի հետ խօսում էի: Ըս-  
կըսեցի երկրին հարց ու փորձ աներ: Ինչից է պա-  
տահում, ասում էի, որ արեգակը ցերեկ ժամանակ  
խաւարում է: Կէս օրին յանկարծ այնպէս մթնում  
է, որ թռչունները իրանց բունն են մտնում, կարծես

զիշեր լինի. մարդիկ փախչում են գաշտից, ամենքը սարսափում են... մէկ էլ տեսար — մի քանի բոպէից յետոյ արեգակը կրկին դուրս եկաւ, նորից լուսացաւ և ամեն բան կրկին առաջուայ կարտով գնաց: Ճշմարի՞տ է, հարցնում էի ես, որ կախարդ կինը իր ցախաւելով ծածկում է արեգակը, կամ ճշմարի՞տ է, որ սատանան իր թեւերը թափահարում է: Իսկ մէկ զինուոր ասում էր, թէ ինքը գրքում կարգացել է, իբր թէ հրաման չէ առած որ այս ինչ օրը արև լինի: Սա բոլորը պատմեցի նրան, իսկ նա պատասխանեց. «Պու ինքդ հասկանում ես, որ սուտ է»:

— Լուսինը ո՞ր մոլորակի շուրջն է ման գալիս — հարցրեց նա:

— Երկրի շուրջը:

— Իսկ երկի՞րը:

— Երեգակի շուրջը:

— Ուրեմն չէ կատող պատահել որ լուսինը երկրի չորս կողմը վագելով արեգակի և նրա մէջ տեղն ընկնի:

— Ի հարիե, կարող է:

— Իսկ եթէ կարող է, այն ժամանակ լուսինը արեգակին կը ծածկէ և լուսնի ստուերը կընկնի երկրի վերայ: Սցագէ՞ս է թէ՛ ոչ:

— Երեսում է, որ այդպէս է: Այս օրինակ, եթէ կոպէկանոյը բղզանի և ձրագի մէջ տեղն ընկնէր,

կոպէկանոյի շուաքը կընկնէր բղզանի վերայ և ձրագը բղզանի համար կը խաւարէր:

— Նոյնպէս էլ արեգակն է խաւարում երկրի համար: Մէկ ուրիշ օրինակ ասեմ: Երեկոյեան, երբ ձրագը զրուած է սեղանի վերայ, եթէ ձեռքդ մեկնես ձրագի և պատի միջե, ձեռիդ շուաքը կընկնի պատի վերայ, չէ:

— Ինչպէս չէ: Մինչեւ անդամ այդպէս անելով պատի վերայ շուաքից նապաստակներ են լինում կամ երկու ձեռների ափերը իրար կպցնելով ստանում են ձկան զլուխ, իսկ ձեռները բաժանելով ստանում են ձկան բերան:

— Այ, տեսնո՞ւմ ես, ինչպէս ձեռքի ստուերը ընկնում է պատի վերայ և ձրագը խաւարում է, նոյնպէս էլ լուսնի ստուերը ընկնում է երկրի վերայ և արեգակը խաւարում է: Սցագէս, որ քո ասած կախարդ կինը կամ ստանան լուսինն է:

— Ուրիմն ցախաւելը չէ ծածկում արեգակին, այլ լուսինը:

— Ի հարկէ:

— Ոչ էլ ստանայի թեր, այլ կրկին լուսի՞նը:

— Այս:

— Հապա ինչո՞ւ այդ չի երկում:

— Ինչը:

— Որ լուսինը արեգակի առաջ կանգնած է լինում:

— Հա... նշանափումէ, որ մօռացել ես առաջուայ

ասածու: Իսկ երբ լուսինը ծնունդ է առնում, այն ժամանակ նա երեսում է: Յիշո՞ւմ ես իմ գնդակը զիսիդ և ծրագի մէջ տեղը:

—Ախ, ձշմարիս: Այս՛, ձիշտ է, լուսինը այն ժամանակ չէ երեսում, որովհետեւ դէպի մեղ դարձրած երեսը խաւար է լինում:

—Տեսնո՞ւմ ես, միւնցին պատճառով նա չէ երեսում արեգակի խաւարման ժամանակ: Այնպէս որ այդ խաւարումը և լուսնի ծնունդը միաժամանակ են պատահում: Հարցրո՞ւ ծերունիներին, որոնք մի քանի անգամ տեսել են արեգակի խաւարումը: Նրանք քեզ կ'ասեն, որ դա միշտ լուսնի ծննդի ժամանակ է պատահում:

—Չէ, աղա, այդպէս չէ:

—Ի՞նչպէս:

—Ա՛խր լուսինը ամեն ամիս նորում է, իսկ ամեն ամիս խաւարում չէ լինում:

—Դա նշանակութիւն չունի: Ես չեմ ասում, թէ ամեն անգամ, երբ լուսինը նորում է, արեգակն էլ խաւարում է, այլ ասում եմ, թէ ամեն մի խաւարման ժամանակ, լինում է լուսնի ծնունդ:

—Իսկ ինչի՞ միշտ միասին չեն պատահում:

—Որովհետեւ ամեն անգամ նոր լուսինը արեգակի և երկրի հետ մէկ գծի վերայ չէ գտնում: Եթէ ձեռդ, որ պահում ես ծրագի և պատի մէջ տեղում, բարձրացնես դէպի վերև, նրանից ընկած

ստուերն էլ կը բարձրանայ. Իսկ եթէ ձեռքդ դէպի ներքե տանես, ստուերն էլ ներքե կիջնի: Նյոնպէս արեգակի խաւարումը պատահում է, կարելի է ասել, ամեն անգամ, երբ լուսինը նորում է, միայն ամեն մէկ անգամ երկրի համար չէ պատահում, մէկ անգամ նրանից բարձր է անցնում, միւս անգամ նրանից ցածր և նրա վերայ չէ ընկնում:

—Իսկ ինչի՞ է այդպէս:

—Լուսնի Ճանապարհը այնպէս է, որ նա երկրի և արեգակի հետ միասին մէկ գծի վերայ շատ հազիւ է գտնում: Իսկ լուսնի խաւարումը տեսել ես:

—Ոչ, չեմ տեսել: Մի՞թէ նա էլ խաւարումէ:

—Ի հարկէ, բայց դա միշտ գիշերն է պատահում, երբ մարդիկ քնած են լինում: այդ պատճառով շատերը չեն տեսնում: Ասենք արթուն մնացողներին էլ այնքան նկատելի չէ լինում, ինչպէս արեգակի խաւարման ժամանակ:

—Իսկ ինչո՞ւ լուսինը խաւարում է:

—Այդ արդէն ինքդ պիտի հասկանաս: Եթէ պատահում է, որ լուսինը ընկնում է ուղղակի երկրի և արեգակի մէջ տեղը, մի՞թէ չէ կարող պատահել դրա հակառակը:

—Այսինքն ի՞նչպէս:

—Այնպէս, որ մէջ տեղը կ'ընկնի ո՛չ թէ լուսինը, այլ երկիրը:

—Իսկ այդ երբ կը լինի:

— Ելի մոռացար, միտղ բեր գնդակը: Մի՞թէ չեր պատահում, որ քո զլուխը գանւում էր գնտակի և ձրագի մէջ տեղում:

— Այո՛, այո՛, լուսնի լրումի ժամանակի:

— Տեսնում ես, որ դու ինքու պէտք է իմանացիր:

— Դրա մասին հէնց այնպէս հարցրի. մի ուրիշ բանի վերայ էի մտածում և այդ մօռացայ:

— Դէ՛, այժմ միտղ պահի՛ր, երբ երկիրը գրտնըւում է լուսնի և արեգակի մէջ տեղը և միենդն գծի վերայ, որի վերայ նրանկը են դանւում, այսինքն, նրանցից ո՛չ բարձր, ո՛չ ցածր, այն միջոցին երկրի ստուերը ընկնում է լուսնի վերայ և այդ պատճառով լուսինը խաւարում է:

— Աղա, գիտե՞ս, ինչի՞ վերայ էի մտածում: Ես մտածում էի, թէ արգեօք ձշմարի՞տ է, որ՝ զինուորը զրքում կարգացել է, թէ այս ինչ օրը արև ըստէտք է լինի:

— Այսինքն խաւարում պիտի լինի, ո՛չ թէ արև չը պիտի լինի:

— Միենդն է:

— Այդաղ զարմանալի ոչինչ չը կայ: Դիանականները ամեն տարի հաշուում են, թէ որտեղ և ո՛ր օրը, մինչեւ անգամ ո՛ր ժամին խաւարում կը լինի և այդ բոլորը տարում են զրքի մէջ, որին օրացցց են ասում: Երբ կարգալ կը տափորես, դու ինքու կիմանաս և երբ տուն կը վերադառնաս, ա-

ռաջուց կը գուշակես, խաւարում պիտի լինի՞ թէ ոչ և ելք պիտի լինի:

— Պըրը.... բղաւեց կառապանը և մեր կառքը կողքի վերայ շուռ եկաւ:

— «Ա՛յ քեզ խաւարում», մտածեցի ես: Առաջի անիւը կոարուել էր: Պիտի իջնէինք և նորոգէինք:

## XIII.

**ՀԱՍՏՐԱԿ ՈՒ ՊՈՉԱԽՈՐ ԱՍՑԵՐԻ ԵՒ ԽԱՒԱՐ  
ԿԷՑԵՐԻ ՄԱՍԻՆ.**

Ճանապարհին սկսեցինք խօսել նոյնպէս աստղերի մասին: Թէպէտ ես զիտէի, որ աստղը այնպէս լուսաւոր է, որ ինքն իրեն փայլում է, բայց ինձ մի տեսակ զարմանալի էր թւում, որ աստղը և արեգակը միատեսակ լուսատուներ են: Դուրս է զալիս, որ ամեն մի աստղ անպատճառ արեգակ է, եթէ ինքն իրեն փայլում է, և ընդհակառակը մեր արեգակը ինքը մի հասարակ աստղ է, որովհետեւ նոյնպէս ինքն իրեն փայլում է: Եյնպէս, որ փոխանակ ասելու միլիոն աստղեր՝ կարող ենք ասել միլիոն արեգակներ, և դա ծշմարիտ կը լինի: Նոյնը պէտք է ասել կորութեան մասին: Որ արեգակը, երկիրը և լուսինը գնտածե են, այդ համարեա ինքս հասկացայ. բայց այն, որ բոլոր աստղերն էլ նրանց նման գնտածե են, խելքս չեր կարում: Երբ նայում ես աստղերի վերայ, նա անկիւնաւոր է երեսում, երբեմն վեց և երբեմն ութ անկիւնանի: Իսկ դուրս է զալիս, որ այդպիսի անկիւնները ոչ թէ 6 կամ 8 են, այլ

ամբողջ հազարներ, որովհետեւ այդ անկիւնները աստղերի ձառագյթներն են, իսկ իրենք աստղերը բոլորովին կլոր են: Եթէ երկիրը արեգակից աւելի հեռու լինէր, քան այժմ, արեգակն էլ մէկ փաքրիկ աստղի չափ կ'երևէր և նոյնպէս անկիւնաւոր կը թւէր, չնայած, որ նա կլոր է: Եւ ընդհակառակը, եթէ մի որ և իցէ աստղ այնքան մօտենար մեզ, ինչքան արեգակը, նա էլ արեգակի նման մեծ ու կլոր կ'երևէր և նոյնպէս կը տաքացնէր: Մի խօսքով դրանք արեգակներ են, ոչ թէ աստղեր: Եւ այդ արեգակների մէջ այնպիսիները կան, որ ոչ մի-այն հաւասար են մեր արեգակին, այլ մինչեւ անգամ նրանից մեծ են: Բացի դրանից այդ արեգակներից ամեն մէկը ունի իր առանձին՝ երկնային լուսատուների խումբը, ամեն մէկը ունի իր մոլորակները, իր երկիրը, իր լուսինը: Եւ այդ խմբերից կամ ինչպէս գիտնականները ասում են, համաստեղութիւններից ամեն մէկին տիեզերքի մէջ պահում է իր աստղը, որի շուրջը ամբողջ խումբը ման է գալիս: Բայց դրանց թիւը մինչեւ այժմ ոչ ոք չի գտել: Կարելի է, ոչ ոք էլ չկարողանայ հաշուել քանի որ նրանք անթիւ ու անհամար են: Մինչեւ անգամ առանձինառանձին եղածները անկարելի է հաշւել ուր մնաց թէ շարդպողի բոլոր աստղերը... ծշմարիտ է, կարող են պատասխանել, թէ դա մի սպիտակ շերա է, ոչ թէ աստղեր. կարելի է մի քանիսն էլ հաւա-

տայնեն, թէ զերից մէկը ձմեռուայ յուրա ժամանակը յարդ է զողացել և երկնքով տանելու միջոցին յարդը քիչ-քիչ թափուել է: Այդ թափուած յարդից երկնքի վերայ կազմուել է այդ սպիտակ շերտը, որին ասում են «յարդգողի ճանապարհ»: Բայց դա առասպել է: Խոկապէս յարդգողի ճանապարհը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ անթիւ աստղերի մի շարք. այդ աստղերը այնքան շատ են և այնքան խիս, որ նրանց բոլորի լոյսը միախառնվում է և մի ընդհանուր լոյս կազմում, որը կարծիս մի հասարակ շերտ լինի երկնքի վերոյ: Դէ՛, եկ ու նրանց համարիր: Բայց դա բոլորը չէ դեռ: Այն յարդգողի ճանապարհի յետևում, որ մենք տեսնում ենք աչքով կայ մի ուրիշ յարդգողի ճանապարհ, այսինքն կան նոյնպիսի անթիւ, անհամար աստղեր, որոնք մի շերտ են կազմում: Դէ՛, զրանց համարիր, տեսնենք: Բայց բայի աստղերից, բայի այդ բոլոր ինքնափայլ արեգակներից, նրանց արանքում կան և ուրիշ մոլորակներ, որոնց բոլորովին չենք տեսնում, որովհետեւ նրանց լոյսը լուսնեակինին նման թոյլ է, ուրիշեց է առած: Եւ նրանք գտնուում են այնպիսի աշազին տարածութեան վերայ, որ հասարակ աչքով տեսնել անկարելի է: Դրանից յետոյ եկ ու նրանց հաշիւք գտիր: Բայց կարծում էք որանով վերջացնու. ոչ այդ բոլորը չէ դեռ: Այդ լուսատուներից զատ կան և ուրիշները, որոնց դիսաւոր կամ պոչաւոր աստղ

են ասում: Այդ պոչաւոր աստղերի մասին էլ զանազան առասպեկներ են պատմում: Օրինակ, ասում են, թէ այդ պոչաւոր աստղերը երկնքի վերայ երեսում են սովից, պատերազմից և ժանտախտից առաջ, մի խօսքով, երբ ժողովովին մի որ և իցէ անբախտութիւն պիտի պատահի: Բայց ինչպէս կարող է լինել քանի որ շատ անգամ դիտնական մարդիկ առաջուց խմանում են, թէ երբ պիտի երեկի երկնքի վերայ պոչաւոր աստղ, և զրա մասին օրացոյցներում զրում են, ինչպէս և արեգակի խաւարման մասին: Նշանակում է, որ այդ բոլորը սահմանուած կարգով է լինում: ուրեմն նրանց երեկը թշուառութիւն չէ կարող բերել ինչպէս և թշուառութիւն չեն պատճառում լուսնի նորումը, լրումը, արեգակի խաւարումը և այլն... Ուրեմն, բանը նրանում չէ, թէ ինչ տեսակ անբաղդութիւն են գուշակում այդ մոլորակներն, այլ նրանում, թէ ինչ տեսակ աստղեր են նրանք: Կարծում են, թէ դրանք ել երկնային լուսատուներ են, բայց այնպիսի լուսատուներ, որոնք դեռ նոր են կազմակերպեում, այսինքն, այն նիւթը, որից զրանք կազմուած են, դեռ ևս չէ պնդացել չէ թանձրացել մէկ տեղ: Այդ նիւթը դեռ անքան հեղուկ է, որ օդի և ջրի նման թափանցիկ է: Այդ պատճառով պոչաւոր աստղեր միջով կարելի է տեսնել ուրիշ աստղեր, որոնք գտնուում են նրա յետեսում: Բայց զրանով էլի չէ վերջանում տիեզերքը:

Բացի բոլոր արեգակներից, մոլորակներից և պուշտոր աստղերից կան այսպէս կոչուած «խաւար կէտեր», որոնք պոչաւոր աստղերից էլ թափանցիկ են: Դրանց կէտեր են ասում այն պատճառով, որ նրանք ոչ կը են երեւում, ինչպէս մեզ ամենամօտ լուսատուները և ոչ անկիւնաւոր, ինչպէս ամենահեռաւորները: Իսկ խաւար են ասում դրանց այն պատճառով, որ ամպի նման մութ են: Ասում են, թէ դրանք էլ երկնային մարմիններ են, միայն աւելի նորակազմ, քան պոչաւորները: Ի զուր չէ ասուած, թէ «երկինք պատմեն գիտու Աստուծոյ»:

Եւ ճշմարիտ, մարդ երբ նայում է երկնքի վերայ, երբ մոտածում է, թէ այդ բոլոր աստղիկները այնքան փոքր չեն, ինչպէս երեւում են, այլ դրանք ամբողջ աշխարհներ են, ինչպէս երկիրը և նրա արեգակը, թէ շատերը նրանցից էլ մեծ են. երբ մարդ մոտածում է, թէ միլիոնաւոր այդպիսի աշխարհներ կան տիեզերքում և բացի այդ տեսանելի աշխարհներից կան և աներեւոյթները, մարդ սարսափում է, խելքը կորցնում է: Պարզ է, որ զրա համար ոչ չափ կարող է լինել ոչ թիւ, ոչ հաշիւ:



## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԱՅԴ ԲՈԼՈՐԸ ԻՄԱՑԵԼ.

Քիչ էր մնում, որ զլուխս տրաքուի, երբ սկսեցի մտածել, թէ քանի տեսակ լուսատուներ կան տիեզերքում, թէ ինչքան մեծութիւն ունի նրանցից ամեն մէկը և թէ որքան տեղ է հարկաւոր ամեն մէկի համար: Մինչև անգամ երբ քաղաք մտանք, ես չնկատեցի և միայն այն ժամանակ ուշքի եկայ, երբ Պետրոս աղան կողքս խթեց: Նայում եմ—ահազին աներ, փողոցներում բազմաթիւ մարդիկ, մեծ մասամբ աղաներ, ամեն կողմից գնում՝ գալիս են: Հրապարակների վերայ շատրուաններ են շինուած, իսկ զարպաների վերայ քարէ արծիւներ դրուած... կարծիւ՝ երազ լինել: Ես մոռացայ երկնքի լուսատուները: Քաղաքի միջով գնացինք, գնացինք, վերջապէս հազիւ-հազ տեղ հասանք: Յետոյ երկար ժամանակ Պետրոս աղան իրեն համար բնակարան էր վնասում, իսկ ես պարապութիւնից ամբողջ օրը փողոցումն էի անց կացնում և բերանս բայց չորս կողման մտիկ էի տալիս. քիչ մնաց, որ աչքերս կուրանացին, մինչև որ ամեն բան տնտղեցի: Մեղ հա-

մար բնակարան գտանք և ամենը իր կարգով գնաց: Այդ ժամանակ ես սկսեցի ուսումնարան գնալ. առաւտները զրել-կարգալ էին սովորեցնում: Վարժապետներին հաշիւ չկար, զիւղի նման չըր և ամենքն էլ կարծես ջոկովի լինէին: Ես հեշտութեամբ էի սովորում: Երեք ամսից յետոյ, առանց ուրիշի օդնութեան կարողանում էի կարգալ նոր զբայչս: Պատմութիւնների ժամանակ նոյնպէս զնում էի լսելու, բայց երկար ժամանակ պատմում էին այն, ինչ որ ես զիտէի արգէն: Վերջում հասան այն տեղը, ինչ որ գեռ չէի լսել ոչ տէր-հօրից, ոչ Պետրոս աղայից. այսինքն, թէ ի՞նչպէս և Ե՞րբ են մարդիկ իմացել այդ բոլորը



Ասում են, թէ այն ժամանակից, երբ աշխարհը ստեղծուել է և մարդիկ ապրում են աշխարհիս վերայ, անցել է մի քանի հազար տարի, բայց այդքան ժամանակում ոչ ոքի, մինչեւ անգամ ամենախելօք մարդկանց զիւխը չըր եկել, թէ մեր երկիրը կարող է գնտաձեւ լինել, ամենքը, մինչեւ անգամ ամենազիտուն և ամենանշանաւոր մարդիկ կարծել են, ինձ նման, թէ երկիրը հարթ է, ինչպէս սենեակի յատակը: Բայց սրանից 300 տարի առաջ դուրս

է գալիս մեկ մարդ, որը առաջին անգամ սկսում է խօսել դրա մասին: Այդ մարդի անունը Քրիստովոր Կոլոմբոս էր: Երկար ժամանակ նա սովորել էր զանազան ուսումնարաններում, իսկ յետոյ, աւելի երկար ինքն իրեն էր սովորել: Վաղուց էր նրա զրւխում ծագել այդ միտքը, բայց ոչ ոքին նա սիրաչքը անում դեռ յայտնելու: Իրեն զսպում էր և լըուսում, վախենալով, որ մի՛ գուցէ սխալուի: Նա շարունակ մտածում էր և մտածում: Վերջապէս վճռեց— երկիրը պէտք է գնտաձեւ լինի և ես նրա չորս կողմը պիտի մանի դամ: Եւ երկար չմտածելով նա ուզզակի զիմեց իշխանութեան և ասաց. ինձ առուէք մի նաւ և ես կը գնամ: Երկրի միւս երեսը և ձեզ համար նոր հողեր կը գտնեմ: Այս որ ասաց, սկսեցին նորան ծաղքել, վերան ծիծաղել. գժուել ես զու, եղբայր, ասում էին նրան. եղբայր, զու անսատուած ես: Հապա ի՞նչպէս յետ կը դառնաս, եթէ երկիրը կոր է, ինչպէս զու ես ասում: Ասենք, թէ կարողացար ջրի վերայով դէպի ներքեւ գնալ. իսկ վերադառնալիս, ի՞նչպէս կարող ես բարձրանալ այդ ջրային սարլ... ծիշա մեր աղախնի նման էին դատում նրանք: Բայց մեր աղախնիը ուամիկ է և անուսում, իսկ նրանք պատուաւոր և ուսում առած մարդիկ են եղել: Քրիստովորը չը համբերեց, թողեց իւր քաղաքն և գնաց ուրիշ երկրում բազգ փրնուելու: Թողնելով իւր հայրենիքը՝ իտալիան, հեռա-

ցաւ Սպանիա: Այստեղ էլ նա յաջողութիւն չունեցաւ: Գնաց Փրանսիացւոց թագաւորի մօտ—միենոյն անյաջողութիւնը: Մի տէրութիւնից միւսն էր գնում, մի թագաւորի մօտից միւսի մօտ—չէր յաջողում, ոչ ոք չէր հաւատում նրան, ամենքը կարծում էին, թէ կը տանի նաւը կը կորցնի: Քսան տարի չարչարուեց նա այսպէս, մինչև որ վերջապէս դանուեցաւ մէկ խելօք մարդ՝ Սպանիայի իզարէլա թագուհին: Վերջինս իր ամուսնուն խնդրեց, որ մէկ նաւ տայ նրան: Զափազանց ուրախացած՝ կոլումբոսը սկսեց Ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Պատրաստուեց, նաւ նստեց և Ճանապարհ ընկաւ: Մէկ ամիս գնաց, երկու, երեք ամիս գնաց, բայց ոչինչ չը գտաւ: Նա գնում էր այն ծովով, որտեղ աշխարհի ստեղծուելուց ի վեր ոչ ոք ոտք չէր դրել: Գնում էր, գնում, բայց բացի երկնքից և ծովեց ոչինչ չէր երեսում: Նաւաստիները սկզբում համբերում էին, գնացն, բայց ահա երրորդ ամիսն էլ վերջանալու վերայ էր, իսկ նրանք ցամաքի երես չէին տեսնում: Դարձեալ նոյն ծովն էր ու երկինքը, նոյն երկինքն ու ծովը: Նրանք արխրեցին, երկիւղը պատեց նրանց սիրառ, սկսեցին գանգատուել, թէ կոլոմբոսը բերեց իրենց մի անյայտ տեղ. թէ այդտեղ անպատճառ կը մեռնեն իրենք: Մէկ խօսքով սկսեցին տրանջալ և աղմուկ հանել: Կոլոմբոսը վախենում էր ապստամբութիւնից, վա-

խենում էր, որ իրեն կ'սպանեն: Բայց նա կարողացաւ մի կերպ հանգստացնել, յորդորել նրանց, որ մի քանի օր էլ սպասեն: Մրդարե՛ նշանակած ժամանակը վերջանալիս, վաղ առաւօտեան, նաւաստիներից մէկը, որ նստած էր կայմի վերայ, գոչեց. «ցամաք, ցամաք»: Ամենքը իսկըն գուրս թափուեցան, աչքերը հեռուն յառեցին և մի քանի րոպէից յետոյ ամբողջ նաւի վերայ լսւում էր. «ցամաք, ցամաք»: Ուրախութիւնից Ճանապարհորդները չէին իմանում, թէ ինչ անեն. Ճնդանօթներ էին արձակում, աղօթում էին, լաց էին լինում, իրար համբուրում էին... իսկ կոլոմբոսը նա այժմ կատարելապէս փառաւորվում էր: Նրա առաջ ծունկ էին ըլքում, համբուրում էին նրա շորերը, ձեռները, նրա համար աղօթում էին: Այսպէս գտնուեցաւ երկրագնտի միւս երեսում այն երկիրը, որ կոչւում է Ամերիկա:

Կոլոմբոսը չը նայած չար լեզուներին, վերադարձաւ անփորձ և մեծ յաջողութեամբ: Երբ նա սկսեց պատմել նոր երկրների և նոր մարդկանց մասին, նոր թագաւորութիւնների և նոր թագաւորների մասին—այդ ժամանակ թագաւորը և թագուհին չը զիաէին, թէ որտեղ բազմեցնեն նրան, իսկ այն մարդիկ, որոնք նրան ծաղրում էին ու ծիծաղում, այժմ ծառայութիւններ էին մատուցանում նրան: Կոլոմբոսը մայրաքաղաք մտաւ, ինչպէս թագաւոր:

Ժողովուրդը աղաղակում էր, զանգակները խփում էին, թնդանօթներ էին արձակում: Մէկ խօսքով ամեն բան փոխուել էր նրա համար: Բայց թէ բակալիքը լաւ էր, վերջը վաս դուրս եկաւ: Նատերը, ինչպէս միշտ լինում է, սկսեցին նախանձել Կոլոմբոսին և նրանցից ամեն մէկը աշխատում էր նրա ոտի տակը փոս փորել: Օրինակ, մի քանիսը աշխատում էին նրա զիւտի արժանիքը պահասացնել: Մի անդամ էլ ճաշի ժամանակ, Կոլոմբոսի ներկայութեամբ սկսեցին խօսել թէ մ.ծ բան չէր Կոլոմբոսի երկիրը գտնելը, թէ ամեն մէկը եթէ այդ Ճանապարհով գնար, անպատճառ կր հանդիպէր այն երկրին, ինչպէս և Կոլոմբոսը: Կոլոմբոսը ոչինչ ըսպատասխանեց, սեղանից վեր առաւ մէկ ձու և ասաց: «Ճեզանից նվ կարող է այս ձուն զլսի վերայ կանգնեցնել»: Ամենքը փորձեցին, զանազան հնարներ գործ դրին, բայց ոչինչ դուրս չեկաւ: Այդ ժամանակ Կոլոմբոսը վեր առաւ ձուն, սեղանին սեղմեց, ձուն չարդուեց և կանգնեց: Ամենքն էլ սկսեցին արարնջալ թէ այդպէս իրենք էլ կարող էին անել: Բայց աւելի խելօքները հասկացան, թէ բանը ինչու՞մն է, և լռեցին: Միւս նախանձողները սկսեցին բամբասել, իրար ականջում փսփսալ: Նրանք զըպարաեցին Կոլոմբոսին թագաւորի և թագուհու առաջ և այն տեղը հասցրին, որ նրա ոտները և ձեռները շղթայով կապել տուին: Կոլոմբոսը խնդրեց, որ այդ

շղթաները իրեն հետ գերեզմանում թաղեն: Իսկ նրա մահից յետոյ մի ուրիշ ծովագնայ, Մադելան անունով, իրեն նպատակ դրեց Կոլոմբոսի Ճանապարհով գնալ մինչեւ Ամերիկա, ծովով անցնել նրա միւս կողմը և շարունակել Ճանապարհը դէպի առաջ որպէս զի իմանայ, թէ այդպէս գնալով ուր կը համեմի:

Ճանապարհ ընկաւ: Ամբողջ տարի շարունակ առաջ էր գնում և ինչ դուրս եկաւ. տարուայ վերջին նա հասաւ մի և նոյն տեղը, որտեղից դուրս էր եկել չը նայած, որ ոչ մէկ անդամ յետ չէր գարձել—ճիշտ այնպէս, ինչպէս իմ Ճանձը ձմերուկի վերայ: Նրանից յետոյ ոչ ոք արդէն չէր կարող կասկածել երկրի գնտաճե լինելու մասին: Այդ ժամանակից սկսած ամեն մէկը, ով որ շատ ու քիչ կարգացած է, այլ ևս զրա մտախն չէ վիճում:

Կոլոմբոսի մահից յետոյ գանուեցաւ մի ուրիշ շատ խելօք մարդ, Կոպերնիկ անունով, չը զիւեմ լէհացի թէ գերմանացի: Նրան աշակերտ ժամանակը սովորեցնում էին, թէ երկիրը անշարժ կանգնած է, խակ արեգակը նրա շուրջը ման է զալիս: Բայց այդ աշակերտը այնքան խելօք էր, որ վարժապետի խօսքերին չը հաւատաց և ինքն ուզեց Ճշմարտութիւնն իմանալ: Դրա համար նա 30 տարի շարունակ գրքեր կարգայ, վերջապէս իմացաւ և սկսեց զրա մասին մի գիրք գրել: Եօթը տարի այդ գրքի վերայ

աշխատեց և տպել տուեց. զիրքը գեռ ըստ տպած՝  
մեռաւ. Եւ դրանով միայն ազատուեց անբաղդու-  
թիւնից, որովհետև հէնց որ կարդացին նրա զիրքը,  
ամեն կողմից սկսեցին ծաղը և բամբասել ինչպէս  
և առաջ կողմբուին: Գիտնական մարդիկ ասում  
էին, թէ նա գժուել է, հոգեռորականները,—թէ նա  
անաստուած է: Այնպէս որ, երբ նրանց միջից դուրս  
եկաւ մէկ խելօք մարդ, Գալիէյ անունով, որը ըս-  
կլսեց ցոյց տալ, թէ Կոպերնիկը ոչ յիմար էր, ոչ  
անաստուած և թէ Ճշմարիտ է, որ արեգակը կանգ-  
նած է և երկիրն է նրա շուրջը ման գալիս—դրա  
համար նրան բանտ նստացրին և միայն այն ժամա-  
նակ բաց թողին, երբ նա խոստացաւ, որ ինքը այն-  
պէս կը ձեւանայ, իբր թէ Կոպերնիկին չէ հաւա-  
տում: Բայց մի քանի տարուց յետոյ ուրիշ շա-  
տերն էլ սկսեցին ասել մի և նոյնը և քանի գնում,  
այնքան համարձակ էին ասում: Մի քանի տարի  
անցաւ և Գալիէյի թշնամիները սկսեցին համոզ-  
ուել, որ նա ուղիղ էր ասում: Այդպէս կամաց-կամաց  
ամենքն էլ տեսան, որ Ճշմարտութիւնը կարել չէ  
թագցնել:

Դրանից յետոյ, այն է 200 տարի մեզանից ա-  
ռաջ, մէկ անգիտացի, որի անունն էր Նիւտոն, իմա-  
ցաւ, թէ ինչք վերայ են կանգնած երկիրը, լուսինը  
և բոլոր աստղերն ու մոլորակները: Ուհա թէ ինչպէս  
պատահեց այդ:

Մէկ անգամ նա պառկած էր այգում, խնձորի  
ծառի տակ: Յանկարծ մէկ հասած խնձոր ճիւղից  
պոկուելով ընկաւ նրա վերայ: Նիւտոնը սկսեց մը-  
տածել, թէ ինչու խնձորը ճիւղից պոկուելով, դէպի  
ներքեւ է թռչում, ոչ զէպի վերե: Ի հարկէ նրան  
ամեն մէկը կարող էր պատասխանել, թէ դրա պատ-  
ճառը այն է, որ ինձորը բաւական ծանրութիւն  
ունի: Լաւ, բայց ինչ բան է այդ ծանրութիւնը և  
ինչու ոչ միայն ծանր առարկաները, այլ և ամենա-  
թեթևներն անգամ, ինչպէս օրինակ փետուրը, զէպի  
ներքեւ են ընկնում և ոչ զէպի վերե: Նա մոտածում  
էր. եթէ մինչև անգամ փետուրը, այդ թեթեւ և  
համարեա ծանրութիւն չ'ունեցող փետուրը երկրի  
վերայ է ընկնում, նշանակում է, թէ ծանրութիւնը  
կայանում է նրանում, որ երկիրը զէպի իրեն է ձր-  
գում առարկաները, ինչպէս, օրինակ, մագնիսն է  
ձգում: Խսկ եթէ փետուրը և ինձորը զէպի իրեն են ընկ-  
նում այն պատճառով, որ երկիրը նրանց ձգում է  
զէպի իրեն, ուրեմն դա նոյնպէս զէպի իրեն է ձր-  
գում մարդուն, անասունին, տունը և ամենը, ինչ  
որ գտնուում է երկրի վերայ: Այդ պատճառով նը-  
րանք ամենքն էլ չեն կարողանում թռչել հեռա-  
նալ երկրից: Խսկ եթէ երկիրը ձգում է բոլորը, ինչ  
որ իրեն մօտիկ է, զուցէ լուսինն էլ փազում է նը-  
րա շուրջը այն պատճառով, որ երկիրը քաշում է  
նրան զէպի իրեն: Խսկ եթէ դա Ճշմարիտ է, ուրեմն

ինքը երկիրը արեգակի շուրջը պտտում է այն պատճառով, որ արեգակը նրան քաշում է գեղի իրեն և այլն և այլն...

Այս կերպով փոքր առ փոքր նիւթոնը խնձորից հասաւ ամբողջ ամեղելքին և դուաւ, որ բօլոր երկնային մարմիններին աշխարհումն պահում է միենոյն ոյժը, որի շնորհիւ հասարակ խնձորը գետին է ընկնում. այդ ոյժը առհասարակ ծանրութիւն ենք անուանում, իսկ նիւթոնը զրան անուանեց ձգողութիւն:

Աւելի ուշ այն է 100 տարի սրանից առաջ, իմացան պոչաւոր աստղերի մասին և դադարեցին նրանցից վախենալ: Իսկ մինչև այդ ժամանակ ուսումնականները և անուսումները վախենում էին նրանցից: Բայց մէկ անգիտացի Հալէյ անունով, փոխանակ վախենալու պոչաւոր աստղերից, սկսեց հետաքրրուել նրանցով, մանուանդ մէկով, որ մի քանի անգամ երեացել էր զին ժամանակներում: Քըրքըրելով այդ ասադի մասին զրուած զին թղթերը, որտեղ նշանակուած էին օրը և թիւը, երբ ամեն անգամ նա երեացել էր, Հալէյը սկսեց հաշուել, թէ քանի տարուց յետոյ է այդ պատահել ամեն անգամ և այդպէս նա դուաւ, որ այդ պոչաւոր աստղը երեացել է 76 տարին մի անգամ:

Այդ հիման վերայ նա դուշտկեց, որ տատզը 76 տարուց յետոյ կրկին կ'երեի: Երբ հասաւ այդ ժամանակը, սկսեցին սպասել, թէ կը կատարում արդեօք նրա դուշտկութիւնը—և ճշմարիտ, առազը երեց ձիշտ նշանակուած ասրում: Այդ ժամանակից տեսան, որ պոչաւոր աստղերն ել ունեն իրենց կորդ ու կանոնը, հետեւարար նրանց երեկու Աստուծոյ բարկութեան նշան չէ, այլ հասարակ երկնային կանոն, որ սահմանուած է նրանց համար:

Դեռ աւելի ուշ նկատեցին լուսնի վերայի ստրերը, ձորերը և ձեղքուտքները: Սրանից 50 տարի առաջ անզլիացի Գերշելը հնարեց այնպիսի զիտակ, որով մի քանի հազար վերաս հեռու կարելի է տեսնել և որին զբա համար ել հեռազլիտակ են ասում:

Այդ հեռազլիտակով նկատեցին լուսնի վերայ այն առարկաները, որոնց մենք այժմ ծանօթ ենք:

Նոյնպէս նրա միջոցով տեսան, որ յարդողի ժանապարհը հասարակ շերտ չէ երկնքի վերայ, այլ առանձին աստղերի անթիւ հաւաքածու:

Վերջապէս նոյն հեռազլիտակի միջոցով տեսան, որ այդ յարդողի ժանապարհը յետեւում կայ մի ուրիշ յարդողի ժանապարհ:

Իսկ այս բոլորից երեսում է, որ մարդիկ տարեց  
տարի աւելի և աւելի են խմանում: Այս ամբողջ  
զիտութիւնը, որի մասին մենք մինչև այժմ խօսում  
էինք երեք հարիւր տարի առաջ, համարեա թէ  
յայտնի չէր բոլորովին. իսկ այժմ մենք նրա մասին  
մեր պապերից աւելի զիտենք: Զարմանալի չէ, որ  
այսուհետեւ էլ նոյնը կը լինի: Ինչ որ մենք գեռ  
չը զիտենք, ժամանակով մեր յետազաները կ'իմա-  
նան: Այս յատուկ է բոլոր զիտութիւններին. իսկ  
այս զիտութիւնը, որի մասին խօսեցինք, կոչում է  
«աստղ ագիտութիւն»:

ՎԵՐՋ.



ԲՓ

2761

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0066889

